Ազգ
Azg
9 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 201(4819)
ISSN: 1829-1651

# Բակո Սահակյան. Արցախի գործընթացները չեն հակասում գերտերությունների շահերին

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
*Քյոլն, Գերմանիա*

Նոյեմբերի 7-ին Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում կայացավ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի եւ նրան ուղեկցող Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանի, ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանի, Բեռլինում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանի, ԼՂՀ ներկայացուցիչ Հարություն Գրիգորյանի հետ հայ համայնքի հանդիպումը: Նախ հյուրերին ողջունեց Գերմանահայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Բեկչյանը, այնուհետեւ ամբիոնին մոտեցավ ԼՂՀ նախագահը: Բակո Սահակյանն ամփոփ ներկայացրեց իր ղեկավարած երկրի արդի վիճակը, պատասխանեց ներկաների հարցերին:

Իսկ եկեղեցուն կից Հայ տանը սառը խորտիկների համտեսն ու ջերմ զրույցը շարունակվեցին ավելի երկար՝ ընդմիջվելով Արցախում մանկապարտեզի շինարարության ծրագրի համար ներդրումային հնարավորությունների մասին տեղեկատվությամբ:

ԼՂՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը նոյեմբերի 8-ին մեկնեց Բեռլին՝ հանդիպելու Բունդեսթագի պատգամավորների հետ: Երկու ժամ տեւած հանդիպմանը նախագահի հետ մասնակցել են Դավիթ Բաբայանը, դեսպան Արմեն Մարտիրոսյանն ու ԼՂՀ ներկայացուցիչ Հարություն Գրիգորյանը: Ինչպես տեղեկացանք պարոն Գրիգորյանից ու Բաբայանից երեկ հեռախոսով, ներկա են եղել Բունդեսթագի թե՛ Քրիստոնեա-դեմոկրատական, թե՛ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների պատգամավորներ: Խոսվել են երկկողմ հարաբերությունների, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման եւ տարածքային զարգացումներին առնչվող հարցեր: Անդրադարձել են համագործակցությունը խորացնելու հեռանկարներին:

Նոյեմբերի 9-ին ԼՂՀ պատվիրակությունը կմեկնի Շվեյցարիա, եվրոպական այլ երկրներ ու ԱՄՆ՝ հանդիպումների: Տեղի սղության պատճառով հայ համայնքի հետ նախագահի հանդիպման մանրամասներին, սրահում հնչեցրած այլոց ու մեր հարցերի պատասխաններին դեռ կանդրադառնանք, այսօր մեր ընթերցողներին տրամադրելով հանդիպումից հետո ԼՂՀ նախագահի «**Ազգին**» տված հարցազրույցը:

Տես էջ 2

# Հայաստան-Իրան՝ ոչ մի խնդիր

## *Երեւանում էր Իրանի արտգործնախարար Սալեհին*

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



Հայաստանն ու Իրանը երկկողմ հարաբերություններում որեւէ խնդիր չունեն: Այս մասին երեկ համատեղ ասուլիսում հայտարարեց աշխատանքային այցով Երեւան ժամանած Իրանի արտգործնախարար **Ալի Աքբար Սալեհին**, Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանն** էլ համաձայնեց գործընկերոջ խոսքերին: Նալբանդյանը նաեւ տեղեկացրեց, որ առաջին անգամ Հայաստան այցելող Սալեհիի հետ քննարկել են ոչ միայն իրականացվող նախագծեր, այլեւ հեռանկարայինները, մասնավորապես տրանսպորտի եւ էներգետիկայի ոլորտներում, նաեւ նախապատրաստվելով մինչեւ տարեվերջ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի Հայաստան այցելությունը:

Սալեհիի խոսքերով արդեն, առաջին այցելությունից լավ հիշողություններով է մեկնելու «սիրելի ու հարեւան Հայաստանից»: Լավ հարաբերություններ ունեցող Հայաստանի ու Իրանի համար Սալեհին հույս հայտնեց, որ կգա ժամանակ, երբ Իրանից Հայաստան այցելուների թիվը կհասնի 1 մլն-ը, երկու երկրներն էլ կանցնեն ոչ անցագրային ռեժիմի, այնպես, «կարծես մեկ երկրի տարածքում կտեղաշարժվեն», զարգացում կլինի նաեւ ռազմավարական, էներգետիկ, գազային, ճանապարհների ու երկաթգծի, սահմանային ընդհանուր ջրերի՝ ի դեմս ՀԷԿ-ի օգտագործման հարցերում:

Տես էջ 8

# «ԱՄՆ-ը վախենում է Իրանի ներուժից»

## *Հայտարարել է նախագահ Ահմադինեժադը եգիպտական «Ալ Աքբար» թերթին*

Եգիպտական «Ալ Աքբար» թերթին տված հարցազրույցում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, «Դունիա բուլթենի» կայքէջի վկայությամբ, ԱՄՆ-ին եւ Իսրայելին մեղադրել է տարածաշրջանում Իրանին հեղինակազրկելու, ինչպես նաեւ Սաուդյան Արաբիայի դեմ հակադրելու փորձերի մեջ: Այնուհետեւ նա նշել է, որ Իրանը ռազմական ներուժով էապես տարբերվում է տարածաշրջանի մյուս երկրներից, այդ ներուժը օրեցօր աճում է, իսկ երկիրը՝ շարունակ առաջադիմում, հետեւաբար Իրանն ի վիճակի է մրցակցել Իսրայելի, Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի հետ:

Վերջում նախագահ Ահմադինեժադն ասել է, որ ԱՄՆ-ը վախենում է Իրանի ներուժից եւ Սաուդյան Արաբիայի հետ ունեցած բարեկամությունից, այդ իսկ պատճառով էլ փորձում է հակամարտություն հրահրել տարածաշրջանի բարեկամական այս երկու երկրների միջեւ:

Հ. Չ.

# «Ցեղասպանության ճանաչումը ԵՄ-ին անդամակցելու նախապայման պետք է առաջադրվի Թուրքիային»

## *Ռոբերտ Ֆիսքը՝ Հայոց ցեղասպանության մասին*

Անգլիական «Ինդեփենդենթ» թերթի Միջին Արեւելքի թղթակից Ռոբերտ Ֆիսքը ցեղասպանության հարցին անդրադարձել է իր գրքում, որի մասին էլ պատմել է թուրքական «Ռադիկալի» աշխատակից Ասլը Թեքինային: Ի դեպ, նրա հուշագրությունները բաղկացած են 24 մասից, մեկը նվիրված է Հայոց ցեղասպանությանը:

Ահա թե ինչ է ասել Ֆիսքը. «Ես իմ գրքի Հայոց ցեղասպանությանը նվիրված հատվածը գրի եմ առել անգլիացիների եւ անգլախոս ընթերցողների համար: Այն ժամանակ դեռ գրքիս թուրքերեն թարգմանությունը ծրագրված չէր: Մտավախություն ունեմ, որ հրատարակման դեպքում թուրք ընթերցողը կկենտրոնանա 24 մասից կազմված գրքիս հենց Հայոց ցեղասպանության հատվածի վրա: Միաժամանակ մտածում եմ, որ թուրքերը հզոր ազգ են: Բացի դրանից՝ ունեմ բազմաթիվ թուրք ընկերներ, որոնք 1915-ի Հայոց ցեղասպանության մասին կարողանում են բացահայտորեն արտահայտվել: Հետզհետե աճում է նաեւ իրենց տատերի հայ լինելը խոստովանող թուրքերի թիվը: Հայերին խորհուրդ եմ տալիս կազմել իրենց կյանքը վտանգելու գնով հայ զոհերին մահից փրկած օսմանյան թուրքերի ցուցակը, որոնց մեջ սովորական ոստիկաններ են, Հալեպի նահանգապետը կամ շարքային թուրք ընտանիքներ:

Հայերին ասում եմ, որ մեծարեն այդ թուրքերին: Կարծում եմ՝ նրանց պետք է մեծարեն նաեւ ժամանակակից թուրքերը, քանի որ հայ փրկելով փրկել են օսմանյան վարչակազմի խիղճը: Հայոց ցեղասպանության ճանաչումը, ինչ խոսք, չի երաշխավորի Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին: Սակայն դա պետք է լինի անդամակցության նախապայմաններից մեկը: Օրինակ, Անգլիան ընդունել է 1840-ականներին Իռլանդիային սովի մատնելու պատասխանատվությունը, Ավստրալիան՝ բնիկների նկատմամբ բռնարարքներինը, իսկ Գերմանիան՝ Հոլոքոսթինը, եւ այդ երկրներից ոչ մեկը դրա համար չի տուժել»:

Հ. Չ.

# Առաջիկա օրերին օդի ջերմաստիճանը կբարձրանա 5-7 աստիճանով

Ինչպես «**Ազգին**» տեղեկացրեց ՀՀ ԱԻՆ «Հայհիդրոմետ» ծառայության օպերատիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանը**, առաջիկա երեք օրերին սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանն աստիճանաբար կբարձրանա 5-7 աստիճանով: Նոյեմբերի 12-ին, 13-ին եւ 14-ին գիշերային ժամերին կդիտվի ամպամածություն եւ կգրանցվի 0-ից բարձր ջերմաստիճան: Առաջիկա երկու գիշերներին Արարատյան դաշտում սպասվում է մինչեւ 5 աստիճան ցուրտ, իսկ 11-ից՝ 1-5 աստիճան տաքություն է սպասվում գիշերը, ցերեկը՝ 8-11: Նոյեմբերի 11-ին եւ 12-ին հանրապետության առանձին շրջաններում սպասվում են տեղումներ ձյան տեսքով, իսկ Արարատյան դաշտում եւ մայրաքաղաքում՝ անձրեւ: Երեւանում այսօր գիշերը կլինի 4-6 աստիճան ցուրտ, ցերեկը՝ 8-11 աստիճան տաքություն: Նոյեմբերի 11-ին՝ գիշերը 1-3 աստիճան տաքություն, գիշերը՝ 9-11 աստիճան տաքություն: Հաջորդ գիշերը ջերմաստիճանը կբարձրանա եւս 3 աստիճանով, իսկ ցերեկվա ջերմաստիճանը կմնա նույնը: Առաջիկա հինգ օրերին Երեւանում ձյուն չի տեղա, իսկ մինչեւ ամսվա վերջ շատ հավանական է, որ «սպիտակ սավանը» Երեւանում էլ փռվի: **Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**

# Նորաստեղծ հանձնաժողովը կպահովի աշնանային զորակոչի օրինականությունը

**Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով աշնանային զորակոչի թափանցիկության եւ օրինականության ապահովման, քաղաքացիների դիմումներում եւ բողոքների հարցերի արագ լուծման նպատակով ստեղծվել է հանձնաժողով՝ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախագահ Գեղամ Հարությունյանի ղեկավարությամբ: Զորակոչի ընթացքում քաղաքացիները դիմում-բողոքները կարող են ներկայացնել պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ՝ Մոսկովյան 5 հասցեում, կամ զանգահարել 52-34 86:** Հ. Հ.

# Ամեն ինչ ավելի պարզ է, քան թվում է

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Անցած շաբաթ սկսված պաշտոնափոխություններն այս շաբաթ դեռեւս շղթայացող շարունակություն չեն ունեցել՝ նոր ոստիկանապետ Վովա Գասպարյանն է միայն համակարգի ներսում մի քանի մարդկանց փոխարինել ուրիշներով, էլի մի քանի՝ հասարակության համար աննկարեւոր փոփոխություններ են եղել: Սակայն մամուլը շարունակում է զանազան «աղբյուրներից» վերցրած լուրեր նետել շրջանառության մեջ, ասենք, մարզպետների կամ գլխավոր դատախազի փոփոխության մասին (իբր՝ Աղվան Հովսեփյանին փոխարինելու է Արթուր Բաղդասարյանը), դեռեւս խոսում են նաեւ ԲՀԿ-ական նախարարների հնարավոր փոփոխությունից: Բայց առայժմ միայն լուրերի մակարդակ է, եւ դեռ ոչ մի առանցքային պաշտոնյա չի հրաժարվել իր պաշտոնից՝ ՀՀԿ նախընտրական շտաբի հնարավոր պետի հնարավոր տեղակալ դառնալու համար, ու մենք ժամանակ ունեցանք փաստորեն ավելի խորությամբ նայելու տեղի ունեցածին: Մեր «նայելը» մի առավելություն ունի՝ քաղաքական ուժ չենք ներկայացնում ու յուրաքանչյուր կատարվող բանի ցանկություն չկա կուսակցական պրիզմայով դիտելու կամ փչել-ուռեցնելու, եւ այս իմաստով մեր դիտարկումներում շահեկան վիճակում ենք գտնվում՝ հասարակության լայն հետաքրքրության տեսանկյունից նայելով կատարվողին:

Դատելով այն խոսակցություններից ու մեր աղբյուրներից ստացված տեղեկություններից, թե ովքե՞ր կարող են համալրել ՀՀԿ համամասնական ցուցակն ապագայում, եւ դիտելով պաշտոնափոխությունների վերտոհի ուղղվածությունը՝ կարելի է գոնե նախնական եզրահանգումների գալ, թե ի վերջո ի՞նչն է այդ բոլորի գլխավոր պատճառը (նկատի ունեցեք՝ «Ազգը» գրել է հարակից, ուղեկից հնարավոր պատճառների մասին, բայց երբեք չի փորձել գլխավոր «ինչուի» պատասխանը տալ): Այժմ էլ չհավակնելով դրան, այնուամենայնիվ, մեր նշածներից ավելի գերադաս շարժառիթի մասին ենք ուզում խոսել: Հիշո՞ւմ եք՝ ՀՀԿ ապագա համամասնական ցուցակում ընդգրկվելու արժանի մի քանի անուն տվել էր հենց վարչապետը՝ Պարույր Հայրիկյան, Արտաշես Գեղամյան, Խոսրով Հարությունյան:

Տես էջ 2

# Թերթը պե՞տք է պատասխանատվություն կրի ընթերցողների մեկնաբանությունների համար

**Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշել է «Հրապարակ» օրաթերթի գույքի վրա արգելանք դնել: Մինչ այդ դատարանը արգելանք էր դրել թերթի դրամական միջոցների վրա, սակայն բողոքարկմամբ որոշումը չեղյալ համարվեց: «Հրապարակն» այս անգամ հայտնվել է աբսուրդ իրավիճակում, նրա դեմ դատական հայց է ներկայացվել թերթի ընթերցողների մեկնաբանությունների պատճառով: Պարզվում է, որ թերթը պատասխանատվություն պետք կրի նաեւ իր ընթերցողների մեկնաբանությունների համար: Օգոստոսին թերթը հոդված է հրապարակել փաստաբան Արթուր Գրիգորյանի մասին: Հոդվածը ներկայացրել է փաստաբանի ծառայություններից դժգոհ մնացած քաղաքացիների բողոքը: «Մեկնաբանություն» բաժնում թերթի հոդվածը կարդացած մի քանի քաղաքացիներ նույնպես դժգոհել են փաստաբանի գործողություններից եւ իրենց կարծիքը ներկայացրել: «Արթուր Գրիգորյանի պատճառով կորցրինք բողոքարկելու իրավունքը՝ զուտ իր բողոքը ուշացնելու պատճառով»: «Մեր գործով նույն սցենարով սկզբից պայմանագիր կնքեց 150.000 դրամի, վերջում 600.000 դրամի հասցրեց ու ընդամենը փորձեց հարցը դատավորի հետ միջնորդությամբ լուծել»: Սրանք հատվածներ են ընթերցողների թողած մեկնաբանություններից: Այս եւ մի շարք այլ մեկնաբանություններում փաստաբանն իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորող խոսքեր, արտահայտություններ է գտել: Նա դատարանին է ներկայացրել 6 բառ, որոնք, ըստ իրեն, վիրավորական են: Յուրաքանչյուր բառը գնահատել է 3 միլիոն դրամ եւ թերթից պահանջում 18 միլիոն դրամ:**

**Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանն էլ բավարարել է փաստաբանի պահանջը: «Մեր դատավորները կարծում են, որ թերթը պատասխանատվություն է կրում նաեւ ընթերցողների արտահայտած կարծիքների համար: Դատավորի մեկնաբանությամբ՝ օրաթերթը ինտերնետում որոշակի տարածք է տրամադրել ազատ խոսքի համար, հետեւաբար պետք է գրաքննություն մտցնի եւ մեկնաբանությունները խմբագրի», «Ազգ»-ի հետ զրույցում ասաց «Հրապարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը: Նա դատարանի որոշումը որակում է խոսքի ազատությունը ճնշելու փորձ: «Խնդիրն այն է, որ Հայաստանում ինտերնետ տարածությունն օրենքով կարգավորված չէ, հետեւաբար այս առումով որեւէ օրենք չկա: Սա գրեթե նույնն է, թե ընթերցողները Facebook-ում իրենց կարծիքն արտահայտեին փաստաբանի եւ նրանց աշխատանքի մասին: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ աբսուրդ բան կստացվեր, եթե որոշեին Facebook-ի մեկնաբանությունների համար թերթին դատի տալ», ասում է խմբագիրը:**

**Նա հույս ունի, որ Սահմանադրական դատարանը «Զրպարտության եւ վիրավորանքի մասին» օրենքի հոդվածը կորակի հակասահմանադրական: Խմբագրի գնահատմամբ՝ վերոնշյալ օրենքը լղոզված է, խառն ու չի տալիս հստակ պատասխաններ, թե ինչ իրավունքներ եւ պարտականություններ ունի թերթը, եւ ինչ իրավունքներով են օժտված լրատվամիջոցների դեմ դատական հայցեր ներկայացնողները:**

**Նշենք, որ լրատվամիջոցների դեմ ուղղված մյուս բոլոր դատական հայցերի քննությունն այս օրերին դատարաններում կասեցվում կամ հետաձգվում է, քանի որ ՍԴ-ն պատրաստվում է նոյեմբերի 15-ին քննել մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի հայցը՝ համապատասխանո՞ւմ է արդյոք «Զրպարտության եւ վիրավորանքի մասին» օրենքի հոդվածը սահմանադրությանը:**

<. <.

# Սոցիալական հարցերի պատասխանատուներ, ե՞րբ պետք է օգնեք փողոցում գիշերող կնոջը

**Նկարում պատկերված կնոջ՝ Անահիտ Միկիչյանի մասին մենք գրել էինք գարնանը՝ մարտի 11-ին, որ մի կերպ, վերմակներով ու տաք շորերով փաթաթված անցած ձմեռը հանել էր «Վերնիսաժին» մոտիկ կանգառում կամ մոտակա շենքերի մուտքերում գիշերելով: 55-ամյա այս կինը տանիք չունի, մի անկյուն չունի եւ ապրում է բաց երկնքի տակ: Ի տարբերություն իր նման անտուններին՝ նա չի մուրում, իր վիճակի եւ այլ անտունների համեմատ՝ մաքուր է, փորձում է վաստակել իր հացը: Գարնանը նրա պատմությունը ներկայացնելով՝ «Ազգը» հույս ուներ, որ անցնող ամիսներին համապատասխան կառույցները, աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությունը մի ելք կգտնեն աշխատել իմացող այս կնոջ համար, մի տանիքի տակ կամ մի ծերանոցում կտեղավորեն: Անցան 7-8 տաք ամիսները, իսկ Անահիտի խնդիրը ոչ մեկին չհետաքրքրեց, եւ ձմեռվա շեմին, երբ արդեն գիշերը հիմա էլ բավական ցուրտ է, Անահիտն էլի «Վերնիսաժի» կանգառում, բաց երկնքի տակ է գիշերում: Լավ, հարգելի պաշտոնյաներ, էլ որքա՞ն ժամանակ է ձեզ պետք, որ մի կնոջ կարողանաք օգնել:**



**Կամ ծերանոցում տեղավորելու համա՞ր էլ անպայման մի երկարաձեռք պաշտոնյա պետք է բարեխոսի, որ նրա ծանոթին տեղավորեք: Կամ էլ երեւի սպասում եք, որ ինչպես այլ անտուններ, այս կինը նույնպես մեռնի՝ դուք էլ ձեր պարտականությունը կատարելուց ազատվեք:**

Մ. Խ.

# Բակո Սահակյան. Արցախի գործընթացները չեն հակասում գերտերությունների շահերին

*1-ին էջից*

**- Պարո՛ն նախագահ, Ձեր կարծիքով, ի՞նչ հանգամանքներում գերտերությունների շահերը կհամընկնեն Արցախի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը:**

- Կարծում եմ, որ այն գործընթացները, որ տեղ են գտել Արցախում, չեն հակասում թե՛ գերտերությունների շահերին, թե՛ նրանց հայտարարած կարգ-կանոնին: Գերտերություններ ասելով առաջին հերթին կցանկանայի դրա տակ դիտել միջազգային հանրությունը: Որ այսօր Արցախն ապրում է այդ կարգերի շրջանակներում, եւ մեր բոլոր ջանքերն ուղղված են ժողովրդավարական գործընթացներն է՛լ ավելի հաստատուն դարձնելուն, ինչը կնպաստի քաղաքացիական հասարակության ձեւավորմանը, հենց այդ միջազգային հանրության շահերից է բխում: Շատ ուրախ ենք, որ հաջողվում է այս ծանրագույն պայմաններում հասնել նաեւ այդպիսի արդյունքների, հատկապես ժողովրդավարական գործընթացների առումով:

**- ԼՂՀ վարչապետի գնահատմամբ՝ Հայաստանի ու Ղարաբաղի հարաբերություններն այսքան սերտ երբեւիցե չեն եղել, համագործակցությունն այսքան ակտիվ չի եղել, սրանից բխո՞ւմ է, թե ընտրությունների հարցում այդ համագործակցությունն առավել արդյունավետ կլինի, եւ Ղարաբաղը կօգնի Հայաստանին ժողովրդավար, ազատ, արդար, թափանցիկ ընտրություններ կազմակերպելու գործում:**

- Երբ խոսում ենք Հայաստանի ու Արցախի հարաբերությունների մասին, չենք կարող այդ հարաբերությունները դիտել ընտրությունների շրջանակներում եւ դրա հետ կապված: Դա ես վիրավորական եմ համարում:

Համենայն դեպս, ակնհայտ տեսնում ենք, որ Հայաստանը փորձեր եւ աշխատանքներ է իրականացնում՝ ուղղված Հայաստանում էլ ավելի արդյունավետ ընտրություններ անցկացնելուն: Համոզված եմ, որ Հայաստանի իշխանություններին եւ կուսակցություններին հաջողվելու է այնպիսի ընտրություններ անցկացնել, որը նպաստելու է Հայաստանի շենացմանն ու զարգացմանը: Այդ թվում նաեւ՝ Հայաստանը դրանով ավելի մեծ գնահատականի կարժանանա միջազգային հանրության կողմից:

**- Պարոն նախագահ, անկախ Հայաստանի ամենամեծ ձեռքբերումը ազատագրված տարածքներն են: Ո՞րն է Ղարաբաղի ամենամեծ նվաճումը:**

- Եթե մենք խոսում ենք համազգային նշանակության խնդիրների մասին, մենք չենք կարող Հայաստանն ու Արցախը դիտել որպես առանձին, տարբեր շահ կամ արժեքներ հետապնդող երկրներ: Մենք ներկայացնում ենք մի հայրենիք, հետեւաբար համազգային նշանակություն ունեցող հիմնախնդիրները, արժեքներն ու նվաճումները դիտում ենք հավասարաչափ, ինչպես Հայաստանի, այնպես էլ Արցախի:

***ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ***

# Ամեն ինչ ավելի պարզ է, քան թվում է

*1-ին էջից*

Ինչպես որ ՀԱԿ-ի համամասնական ցուցակի կազմումը մեծ գլխացավանք է լինելու ՀԱԿ-ի առաջնորդի համար, քանի որ նա չի իմանալու, թե ի՞նչ բացատրի իր շուրջը եղող այդքան կուսակցապետի անցանկալի հորիզոնականում ներառելու կամ ընդհանրապես չներառելու համար, այնպես էլ ՀՀԿ համամասնական ցուցակը կազմելը ՀՀԿ վերնախավի գժտության պատճառ կարող է դառնալ: Սա ինքնին հասկանալի է, քանի որ ՀՀԿ ղեկավար-երկրի նախագահը խնդիր ունի ընտրությունների գնալ այնպիսի մի ցուցակով, որը հասարակության մեջ գոնե հակակրանք չառաջացնի: Բնականաբար՝ այսօրվա պատգամավորների մեծ մասն այդ ցուցակում չեն լինի (խոսքը կայացած ՀՀԿ-ական պատգամավորների մասին չէ): Բացի դրանից՝ այս խորհրդարանն ընկալվում է որպես նախորդ նախագահի հենարան, եւ ինչու ոչ՝ նույն ՀՀԿ-ն էր նախորդ նախագահի հենարանը: Այնպես որ նորացված ՀՀԿ-ական պատգամավորական կորպուս եւ խորհրդարանում սեփական հավատարիմ հենարան ունենալը Սերժ Սարգսյանի թիվ մեկ խնդիրն է լինելու: Ովքե՞ր կլինեն այդ հենարանում: Խորհրդարանական մեր աղբյուրներից մեկը կարծում է, թե այդ հարցի պատասխանը կարելի է որոնել Անկախության 20-ամյակին նախագահ Սարգսյանի կողմից խորհրդարան հրավիրված քաղաքական գործիչների կազմը հիշելով: Մի այլ աղբյուր կոնկրետ անուններ էր նշում, թե շատ հնարավոր է, որ բացի վարչապետի նշածից, ՀՀԿ նոր ցուցակում լինեն այլ փորձառու եւ քաղաքական անցյալ ունեցող գործիչներ, ինչպես օրինակ՝ Արտաշես Թումանյանը, Արա Սահակյանը, Կտրիճ Սարդարյանը... Ինչո՞ւ ոչ, ասում էր աղբյուրը, օլիգարխների փոխարեն՝ այս անցյալ եւ ներուժ ունեցող մարդկանցով ՀՀԿ համամասնական ցուցակի համալրումը տարբերակ է, որը կարող է դրական նրբաշեշտեր բերել ՀՀԿ-ի վարկի նորացման ուղղությամբ եւ հարստացնել նախագահի իմիջը այն փաստարկով, թե նա օլիգարխների փոխարեն հարգված մարդկանց է բերում խորհրդարան: Ուրեմն՝ այս բոլորի մեջ նորից առանձնացնենք երկու մոտիվ. ազատվել Քոչարյանի հենարան մարդկանցից եւ կառույցներից, բերել այնպիսիներին, որոնք ե՛ւ դրական կերպարներ են, ե՛ւ կդառնան ՀՀԿ ղեկավարի սեփական հենարանի բաղկացուցիչը: Այսինքն՝ տասնամյա իշխանավարության հնացած, հասարակությունից ռմբակոծվող ՀՀԿ-ի կերպարն, այդպիսով, «թյունինգ» կարվի նոր մարդկանցով, որոնց հասարակության մեծ մասը վատ չի վերաբերվի: Հիմա անցած եւ ապագա պաշտոնափոխություններին նայենք այս մոտիվների համատեքստում, այդ ժամանակ կտեսնենք, որ դրանց տակ այնքան էլ խորքային բաներ չկան, ինչպես առաջին հայացքից թվում է: Իսկ այն, որ, այնուամենայնիվ, այս բոլորն ավելի վաղ պետք է արվեր, հասարակությունը պետք է տեսներ այդպիսի փոփոխություններից ի՛ր շահառությունը, դա էլ ուրիշ խնդիր է, քանի որ այդպես չի արվել, եւ այդ նույն հասարակությունն այժմ մեծ հարցականի տակ կարող է դնել այդպիսի փոփոխությունները: Բացի դրանից՝ շատ բան դեռ կախված է լինելու մյուս քաղաքական ուժերի՝ ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի, ՀՅԴ-ի (վերջինս դեռ պետք է կողմնորոշվի իր նախընտրական դիրքորոշումների առումով) պահվածքից: ԲՀԿ-ի խնդիրն էլ դեռ կա ՀՀԿ նորացմանը զուգահեռ: Մի բան է հստակ՝ եթե իշխանական խաղացողները կտրուկ ձեռագիր են փոխում, այդ ձեռագրի համեմատ մարտավարություն փոխելու եւ կողմնորոշվելու խնդիր ունեն նաեւ մյուս գործընկերները, ընդդիմադիրները: Հատկապես վերջիններս, որոնք պետք է տրվեն իրենց հորինած պատրանքին, թե պաշտոնափոխություններն իրենց կողմից իշխանությանը ճնշելու հետեւանք են, այլապես ընդհանրապես կարող են խաղից դուրս մնալ: Նշենք, որ հետեւելով գործընթացներին եւ դրանց վերաբերյալ իշխանական եւ ընդդիմադիր վերլուծաբանների տեսակետներին՝ մի բան կարելի է հստակ ասել. վերջին գործընթացները անսպասելի են բոլորի համար, եւ քաղաքական ուժերն արագ չեն կողմնորոշվում իրենց արձագանքներում, որդեգրելիք կեցվածքներում, մինչդեռ տեղի ունեցողը առանձնապես բարդ խաղ չէ: Պարզ եւ նպատակային խաղը միայն մեկ առավելություն ունի՝ անսպասելիությունը, որին էլ դիմակա են մեր քաղաքական ուժերը ընտրություններից ընդամենը 6 ամիս առաջ:

Էլի առիթ կունենանք խոսելու...

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Գերմանական բարեկամություն» ծրագրի հովանավորը դադարեցրել է հայաստանյան դպրոցներին աջակցությունը

*Հայկական Կարիտասը մեղադրում է ԿԳ նախարարությանը*

Գերմանիայի Բոնն քաղաքի Կարդինալ Ֆրինգսի անվան գիմնազիան, որի հովանավորությամբ 2003 թվականից մինչեւ օրս բարելավվել են Հայաստանի գյուղական եւ քաղաքային 23 դպրոցների ուսումնանյութական պայմանները, այս տարի դադարեցրել է իր ծրագրերը Հայաստանում: Գիմնազիայի ֆինանսական հովանավորությամբ «Գերմանական բարեկամություն» ծրագիրն իրականացրած «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության պատասխանատուները դրա համար մեղադրում են ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը, դադարեցման պատճառ համարելով վերջինիս «անտարբեր վերաբերմունքը»:

Ինչպես նշվեց այս կապակցությամբ Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հրավիրված մամուլի ասուլիսում, այս տարի նախարարությունը լուծարել է նշված ծրագրի շրջանակներում Ախուրյանում վերջերս լիարժեք վերանորոգված` Գյուղատնտեսական ակադեմիայի հենակետային վարժարանը: Հայկական Կարիտասը բազմիցս փորձեր է կատարել հանդիպելու նախարարի հետ` որոշակի պարզաբանումներ ստանալու նպատակով, սակայն արդյունքի չի հասել: Բարերարն էլ հրաժարվել է այսուհետեւ հովանավորել բարեսիրական ծրագրեր Հայաստանում, անընդունելի համարելով այն, որ պետության կողմից համապատասխան վերաբերմունք չի դրսեւորվում ըստ էության պետական հոգածության խնդիրների լուծմանը նպաստող կազմակերպությունների հանդեպ:

«Վարժարանը հենց հիմնովին վերանորոգելուց հետո, մայիս ամսին, մենք տեղեկացանք, որ հաստատությունը լուծարվել է եւ միացվել Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան վարժարանին,- ասաց ծրագրի ղեկավար **Անահիտ Գեւորգյանը**:- Բարերարի համար սա անհասկանալի էր... Մենք ե՛ւ նախքան այս գործը ձեռնարկելը` անցյալ տարի, ե՛ւ այս տարվա սկզբին տեղեկացրել ենք նախարարությանը, որ այսպիսի ծրագիր ենք անելու, եւ ոչ մի արձագանք, ոչ մի զգուշացում չենք ստացել»:

«Հիմնական խնդիրը մեզ համար այն չէ, որ իրենք փակել են վարժարանը,- ավելացրեց Հայկական Կարիտասի գործադիր տնօրեն **Անահիտ Մխոյանը**,- խնդիրն այն է, որ երկխոսությունը չի կայացել: Եվ մենք բացատրություն չենք ունեցել տալու ֆինանսավորումը կատարած կառույցին, ու Հայաստանում երիտասարդների համար կայուն ներդրումներից մեկն ապահովող ծրագիրն այդ պատճառով փակվել է»:

«Գերմանական բարեկամություն» ծրագրի հովանավորման միջոցները գոյանում էին Կարդինալ Ֆրինգսի անվան գիմնազիայի աշակերտների, ուսուցիչների եւ ծնողների հանգանակություններից, դրան ավելանում էր նաեւ շահառու համայնքի որոշ տոկոս ներդրումը: Անցած ութ-ինը տարիների ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում այս ծրագրով կատարվել են ընդհանուր հաշվով ավելի քան 5000 աշակերտներ ընդգրկող դպրոցական շենքերի վերանորոգման, գույքի տրամադրման եւ այլ աշխատանքներ, 500 երեխաների տրամադրվել են գրենական պարագաներ, ծայրահեղ անապահով 152 ընտանիքների` մարդասիրական օգնություն: Հայկական Կարիտասը մտավախություն ունի, որ ծրագրի դադարեցման այս նախադեպը անպատասխան թողնելու դեպքում Հայաստանի վարկանիշը միջազգային կազմակերպությունների շրջանում կարող է տուժել` հանգեցնելով բնակչության գոյատեւմանն աջակցող միջազգային բարեսիրական ծրագրերի նվազեցման:

Կազմակերպությունը նամակով դիմել է հանրապետության վարչապետին` նրա ուշադրությունը հրավիրելով այս խնդրի վրա եւ ակնկալելով կառավարության ղեկավարի արձագանքը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՕԵԿ-ի հանդիպումները Շիրակի մարզի լեփ-լեցուն դահլիճներում

Նոյեմբերի 5-ին ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը հանդիպումներ է ունեցել Շիրակի մարզի Մարալիկ, Արթիկ եւ Գյումրի քաղաքների բնակչության հետ: Բոլոր հանդիպումներն անցել են լեփ-լեցուն դահլիճներում` բարձր ակտիվության, ջերմ եւ անկաշկանդ մթնոլորտում: Արթուր Բաղդասարյանը ներկայացրել է տարածաշրջանի եւ հանրապետության առջեւ ծառացած արդիական խնդիրները, ՕԵԿ-ի կատարած աշխատանքները, խոսել առաջիկա անելիքների մասին, պատասխանել ազգաբնակչությանը հուզող հարցերին: Իր ելույթներում կուսակցության նախագահը կարեւորել է Սերժ Սարգսյանի հետ 2008 թվականին կնքած դաշինքը եւ մատնանշել, որ այն ժամանակ ՕԵԿ-ի սթափ դիրքորոշումը հնարավորություն տվեց կանխելու երկրում քաղաքացիական զանգվածային բախումները, իսկ այսօր կուսակցությունը քայլ առ քայլ բուռն վերելք է ապրում: Նա նշել է նաեւ, որ այսօր շատերն են արդեն ընդունում, որ ՕԵԿ-ն այդ օրերին ճիշտ վարվեց եւ այժմ օր օրի վերականգնում է իր բազմահազար ընտրազանգվածը, ավելի ու ավելի են ամրապնդվում կուսակցության տարածքային կառույցները եւ առաջիկա խորհրդարանական ընտրություններին նրանք մասնակցելու են նույն ոգեւորությամբ ու նույնքան վստահ, որքան նախորդներին: ՕԵԿ-ը ինչպես եղել, այսուհետեւ եւս մնալու է մեր երկրի ներքաղաքական դաշտի ազդեցիկ ուժերից մեկը: Արթուր Բաղդասարյանը վստահություն է հայտնել, որ ՕԵԿ-ը վայելում է ժողովրդի մի ստվար հատվածի աջակցությունը եւ առաջիկայում էլ ներկայանալու է նոր ասելիքով, բովանդակալից ու իրատեսական ծրագրերով:

# Բարերարներ Ջորջ եւ Քերոլայն Նաջարյանները մեղադրվում են իրենց թալանող անձի կողմից

Լինքոլն, Մասաչուսեթս, Միացյալ Նահանգներ: Ամերիկահայ բարերարներ Ջորջ եւ Քերոլայն Նաջարյանների դեմ քաղաքացիական դատարանում հայց է ներկայացվել Գրիգոր Իգիթյանի կողմից: Վերջինս գտնվում է ազատազրկման մեջ եւ կրում է իր պատիժը Նաջարյանների առանձնապես խոշոր չափերի հասնող գույքին խարդախությամբ տիրանալու համար: Իգիթյանը մեղավոր է ճանաչվել բոլոր քրեական ատյաններում, ընդհուպ Վճռաբեկ դատարան, ավելի քան ութ տարվա լսումներից, դատավճիռներից եւ բողոքարկումներից հետո:

Բանտից Իգիթյանը Երեւանի Կենտրոն համայնքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում մեղադրանք է ներկայացրել Նաջարյանների դեմ: Նա հայց է հարուցել փոխհատուցելու ֆինանսական կորուստը, որ կրել է երկար տարիների ընթացքում իր կատարած հանցագործության բացահայտման եւ դատապարտման համար: Ներկայումս Նաջարյանների ունեցվածքը դեռ կալանքի տակ է, որը աննախադեպ երեւույթ է ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրում:

Ըստ Նաջարյանների դատապաշտպանների` Իգիթյանի հարուցած հայցի բոլոր պահանջները իրենց լուծումն են գտել իր դեմ հարուցած քրեական գործի դատական բազմաթիվ որոշումներում: Այս որոշումները հիմնավորելու բոլոր փաստարկները Իգիթյանի դեմ հաստատվել են Հայաստանի բարձրագույն դատական ատյաններում:

# Ներկայացվեց կադաստրի ավտոմատացված համակարգը

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի խորհրդական Խաժակ Կարայանը երեկ Հայաստանի բանկերի միության անդամ առեւտրային բանկերի ներկայացուցիչներին ներկայացրեց կադաստրի կոմիտեի կողմից համակարգի ավտոմատացմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես, թե ինչպես է հնարավոր առանց կադաստր այցելելու մուտքագրել դիմումները, ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Նա նաեւ անդրադարձավ պետական մարմինների միջեւ տեղեկատվության առցանց փոխանակմանը, առցանց հարցումներ իրականացման ձեւերին:

Ա. Ս.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ

# Ինտերնետի կաբելը կտրող տատիկն այլեւս նման բան չի անի

*Ինչ են քննարկել Հայաստանի եւ Վրաստանի տրանսպորտի նախարարները*



**Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանն ու Հայաստանում գտնվող Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Վերա Կոբալիան երեկ հանդիպեցին լրագրողների հետ: Բացելով մամուլի ասուլիսը` Մանուկ Վարդանյանը տեղեկացրեց, որ հայ-վրացական քաղաքական ղեկավարություններն ունեն պայմանավորվածություններ, եւ իրենք պետք է աշխատեն դրանք իրականացնելու ուղղությամբ: Նա հայտնեց, որ Վրաստանն առաջ է անցել ենթակառուցվածքների` ճանապարհների կառուցմամբ, իսկ մենք նոր ենք սկսել Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցումը, բայց փոխարենը Վերա Կոբալիան հիացած էր մեր օդանավակայանով: Ըստ Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարի, քննարկվել են Հայաստան մտնող մեքենաների, վտանգավոր բեռներով մեքենաների, սակագների, որոշ չափով նաեւ ինտերնետի եւ կապի հարցերը:**

**«Քննարկեցինք նաեւ այն տատիկի հարցը, որ կտրել էր ինտերնետի կաբելը, եւ հուսով ենք, որ նա այլեւս նման բան չի անի», հարցերից մեկին կատակով պատասխանեց Մանուկ Վարդանյանը: Նա նաեւ հավելեց, որ այս ամսի 18-19-ին Թբիլիսում տեղի կունենա հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովի նիստը, որտեղ կքննարկվեն այս եւ ուրիշ կարեւոր հարցեր:**

**Վերա Կոբալիան տեղեկացրեց, որ իր այցին հաջորդելու է նախարար Մանուկ Վարդանյանի այցը Թբիլիսի, որտեղ շարունակվելու են աշխատանքների տրանսպորտային խնդիրների շուրջը: Նա նաեւ շնորհավորեց ներկաներին նոր օդանավակայանի բացման կապակցությամբ, ասելով, որ այն աշխարհի ամենագեղեցիկ օդանավակայաններից է: Վրացուհի նախարարը հայտնեց նաեւ, որ Վրաստանը ցանկանում է վերականգնել Քութայիսի օդանավակայանը եւ կօգտագործի Հայաստանի փորձն ու կադրերին:**

Ա. Ս.

# 12 մլն դոլար սինդիկացված վարկ «Արարատբանկին»

**«Արարատբանկը» երեկ 12 մլն դոլար սինդիկացված վարկի ստացման պայմանագիր ստորագրեց Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ: «Արարատբանկի» կողմից պայմանագիրը ստորագրեց բանկի վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը, ՎԶԵԲ-ի կողմից` սինդիկացիոն վարկերի վարչության ղեկավար Լորենս Ձորգենսենը:**

**Անդրադառնալով համաձայնագրին, Աշոտ Օսիպյանը հայտնեց, որ 12 մլն դոլարից 3 մլն դոլարը ՎԶԵԲ-ի միջոցներն են, իսկ 9 մլն դոլարը տրամադրել են առեւտրային բանկերը` ռուսական «Պրոմսվյազբանկը», բելգիական «ՎԴԿ Սպաարբանկը», լիբանանյան «Բիբլոս բանկը»: Ըստ Աշոտ Օսիպյանի` պայմանագրի ստորագրումը նոր փուլ է բանկի համար, քանի որ առաջին անգամ դուրս եկավ միջազգային շուկա եւ այնտեղից ներգրավեց միջոցներ: Խոսքը, մասնավորապես, առեւտրային բանկերից ստացված 9 մլն դոլարի մասին է: «Արարատբանկի» վարչության նախագահի հավաստմամբ, դա վստահություն է բանկի նկատմամբ: Նա նաեւ տեղեկացրեց, որ ստացված վարկն օգտագործվելու է փոքր եւ միջին ձեռնարկատիրության, առեւտրի ֆինանսավորման համար: Աշոտ Օսիպյանը հայտարարեց նաեւ, որ «Արարատբանկը» հանդես է գալիս նոր նախաձեռնությամբ` ուղղված արտահանման խրախուսմանը: Արտահանող եւ ներմուծմանը փոխարինող ընկերությունները բանկից վարկեր կստանան տարեկան 9 տոկոսով:**

**Լորենս Ձորգենսենը նշեց, որ ՎԶԵԲ-ը պատրաստակամ է շարունակելու համագործակցությունը «Արարատբանկի» հետ: Նա տեղեկացրեց, որ սա առաջին սինդիկացված վարկն է, շեշտելով, որ «Արարատբանկը» փոքր եւ միջին բիզնեսի ֆինանսավորման առաջատարն է Հայաստանում: ՎԶԵԲ-ի ներկայացուցիչը հայտնեց նաեւ, որ Հայաստանում բանկն իրականացնում է ավելի քան 100 նախագծեր` 500 մլն դոլար արժողությամբ:**

**Պատասխանելով ճգնաժամի նոր փուլի մասին տրված հարցին` «Արարատբանկի» վարչության նախագահն ասաց, որ միջազգային վարկային շուկաները կրճատվել են եւ նկատվում է տոկոսադրույքների աճ, ինչը մտահոգող երեւույթ է: Սակայն հայկական ֆինանսական շուկայում, ըստ Աշոտ Օսիպյանի, այդպիսի վտանգ չկա, քանի որ կան 21 բանկեր, որոնց մրցակցությամբ տոկոսադրույքները նվազել են 2-3 տոկոսով, եւ այդ գործընթացը կշարունակվի նաեւ այս տարի: Ինչ վերաբերում է «Արարատբանկին», ապա նրա ղեկավարը վստահեցրեց, որ բանկում ներդրվել է ռիսկի կառավարման լավագույն համակարգը, իրենք շատ զգույշ են եւ չեն վախենում ճգնաժամից: Նա նաեւ հիշեցրեց, որ 2008-ից բանկը տարեկան 45 տոկոս աճ է ունեցել:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Տարաբնույթ

Հայաստանի ընտրական մթնոլորտը թեժանում է, քանի մոտենում է խորհրդարանական ընտրությունների թվականը: Մայիսին Հայաստանում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ, որոնք լակմուսային թեստի դեր պիտի կատարեն 2014-ի նախագահական ընտրությունների համար: Քաղաքական սպեկտրում հնարավոր վերադասավորումների շուրջը ենթադրությունները այս օրերին հեղեղում են լրատվական դաշտը: Եվ դրանց մեջ գերիշխող հարցն այն է, թե արդյոք նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր թեկնածությունը կառաջադրի՞ նախագահական հաջորդ ընտրություններում: Նախագահության իր երկրորդ շրջանի ավարտից հետո նա նշել էր, որ չի ցանկանում ամենաերիտասարդ պաշտոնաթող քաղաքական գործիչը լինել Հայաստանում, որը արմատական փոփոխություն մտցնել ստեղծված իրավիճակի մեջ»:

Սրանք լայնածավալ հեռանկարներ են, որպեսզի կարելի լինի ինչ-որ չափով իմաստավորել: Այդ պատճառով էլ զանազան մեկնաբանությունների տեղիք են տալիս:

Քանի որ Հայաստանում դեռեւ քվեների քանակը չէ, որ որոշում է ընտրությունների արդյունքը, այլ քվեները հաշվողների ծրագրերը, Քոչարյանը հաստատ կարող է վերադառնալու հնարավորություն ունենալ: Միայն քաղաքական ուժերի միասնական ներգործությունը եւ կոալիցիաների կազմությունը կարող են խանգարել նրա ծրագրերը:

Այդ պատճառով էլ ընտրություններում Քոչարյանի հնարավոր թեկնածության մասին հարցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը պատասխանեց, որ անցյալ փետրվարի 17-ին Հանրապետական եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների միջեւ կնքված պայմանագիրը դեռեւս ուժի մեջ է: Նա մեղադրեց լրատվամիջոցներին կոալիցիայի գործընկերների միջեւ արհեստական ճգնաժամեր կանխատեսելու մեջ: Բայց, մյուս կողմից, իր կուսակցության բարձրաստիճան որոշ անդամներ հրապարակային ելույթներ ունեցան այն մասին, թե կուսակցությունը ծրագրում է առանձին մասնակցել ընտրություններին՝ ջուր լցնելով լրատվամիջոցների ենթադրությունների ջրաղացին:

Ինչ վերաբերում է Քոչարյանի թեկնածությանը, նրան խոչընդոտում են մի շարք խանգարիչ հանգամանքներ, որոնցից ամենափոքրը թերեւս այն խոսակցություններն են, որ իր նախագահության տարիներին որդիներից մեկը 6 միլիարդ...

Քաղաքական խմբակցությունը, որն ամենաշատը օգտվեց Քոչարյանի նախագահությունից, Դաշնակցությունն էր, այդ պատճառով էլ ակնհայտ կարոտախտով է իրեն պահում ներկայիս Հայաստանի քաղաքական սպեկտրում: Րաֆֆի Հովհաննիսյանի «Ժառանգություն» կուսակցությունը, որն անցյալ անգամ սիրախաղ էր անում Լեւոն Տեր-Պետրոսյանի ընդդիմադիր ՀԱԿ-ի հետ, առանց ի վերջո միանալու նրան, այժմ դիրքորոշվում է հօգուտ Դաշնակցության: Տեր-Պետրոսյանն անշուշտ չի ներել նրան, նրա անվճռականությունը:

Ինքը՝ Տեր-Պետրոսյանը եւ իր թիմակիցները դեռեւս վաղաժամկետ խորհրդարանական ընտրությունների եւ նախագահ Սարգսյանի հրաժարականի կոչեր են հնչեցնում, որոնք իրականություն դառնալու հիմքեր չունեն: Նույնիսկ ընդդիմությունն է համոզված...

կհայտնվեն կոտրած տաշտակի առաջ: Նախագահն, ինչ խոսք, իր առաջ դժվարին ճանապարհ ունի անցնելու եւ վերջին ժամանակներս կատարված ցնցումները կարծես չեն նպաստում այդ ճանապարհը հաղթահարելուն: Մի շաբաթվա ընթացքում երեք կարեւոր հրաժարականներ ցնցեցին կառավարության քաղաքական կայունությունը: Առաջինը Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի հրաժարականն էր, որի համար ասում են, թե ռուսաստանյան «Գազպրոմից» լավ, եկամտաբեր աշխատանքի առաջարկ է ստացել: Բայց, ըստ ասեկոսեների, նա ստիպված է հրաժարական տվել, որովհետեւ իշխանությունները այնքան էլ վստահ չեն եղել, որ իրենց ակնկալիքները նա կկարողանա արդարացնել խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

# Քոչարյանական վերադարձի հեռանկարները

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

ամենատարբեր մեկնությունների առիթ էր տվել: Չէ՞ որ քաղաքագետներն ու քաղաքականությունը Հայաստանում ընդհանուր առմամբ կրնկակոխ հետեւում են Մոսկվայի օրինակին: Վլադիմիր Պուտինը շատ հստակորեն էր գծել իր հետագա քաղաքական ծրագրերը՝ Դմիտրի Մեդվեդեւին ընտրելով որպես իր հետնորդ: Վերջինս, իր պաշտոնավարության ժամկետի ավարտից առաջ, ինքը Պուտինի թեկնածությունը առաջարկեց Ռուսաստանում առաջիկա նախագահական ընտրությունների համար:

Ռոբերտ Քոչարյանը վստահաբար ցանկանում է մրցել Պուտինի հետ Հայաստանում: Այդ պատճառով էլ նա չափազանց անկեղծ էր հետագա ծրագրերի մասին իրեն ուղղված հարցերին: Նա երեք նախապայման էր նշում իր հնարավոր վերադարձի համար. «(1) Եթե տնտեսական լճացումը շարունակի վատթարացնել սոցիալական վիճակի բարելավման հեռանկարները, որն էլ իր հերթին խթանի արտագաղթը, (2) եթե հասարակության տարբեր շերտերը պահանջ ներկայացնեն, որ վերադառնամ մեծ քաղաքականություն, (3) եթե անձնապես համոզված լինեմ, որ կկարողանամ նա բարոյական բոլոր իրավունքներն ունի մասնակցելու ընտրություններում որպես թեկնածու: Քանի որ այդ կուսակցությունը հանդիսացել էր Քոչարյանի իշխանության հենակետը, լրատվամիջոցները սկսեցին ենթադրություններ անել, որ իշխող կոալիցիան տարանջատվում է: Ինչպես հայտնի է, ներկայիս «Բարգավաճ Հայաստան» եւ Հանրապետական կուսակցություններն են միասին վերահսկում խորհրդարանը:

Արթուր Բաղդասարյանի «Օրինաց երկիր» կուսակցությունը այդ կոալիցիայում փոքր դեր ունի: Բաղդասարյանն ինքը հարմարավետ տեղ է զբաղեցնում, քանի որ վերընտրվելու հնարավորություն չունի, եթե իր կուսակցությունը փորձի առանձին մասնակցել ընտրություններին: Վերջին ընտրությունների ժամանակ նա հուսախաբ արեց իր ընտրազանգվածին՝ որպես ընդդիմադիր մասնակցելով եւ ընդդիմադիրների քվեները մասնատելով, իսկ ընտրություններից հետո միանալով կոալիցիային:

Ենթադրություններին եւ ասեկոսեներին վերջ դնելու նպատակով պրն Ծառուկյանը վերջերս հանդես եկավ հայտարարությամբ՝ պարզաբանելով, որ անցյալ փետրվարի 17-ին...

ներին որդիներից մեկը 6 միլիարդ դոլարի անձնական հարստություն է կուտակել: Եթե նույնիսկ 90 տոկոսով այդ թիվը չափազանցված լինի, դարձյալ մեծ գումար է Հայաստանի նման փոքր երկրի համար:

Պրն Քոչարյանը կարող է գուցե վստահ լինել, որ արմատական փոփոխություններով կբարելավի ժողովրդի կացությունը, բայց քվեարկողներն էլ կարող են հարց առաջ քաշել, թե ինչո՞ւ նա այդ կախարդական հնարավորությունը չօգտագործեց իր պաշտոնավարության 10 տարիների ընթացքում: Կան նաեւ այն ծանր ամպերը, որոնք կուտակված են նրա գլխավերեւում հոկտեմբերի 27-ի խորհրդարանական սպանդի եւ մարտի 1-ի դեպքերի տեսքով: Վերջինը խանգարիչ մի հանգամանք էր, որ նա ժառանգ թողեց այդ ժամանակ ընտրված նախագահ Սերժ Սարգսյանին:

Քոչարյանական վերադարձի ամենամեծ խոչընդոտը, անշուշտ, ներկայիս իշխող նախագահն է, որն իր դիրքերը զիջելու ցանկություն կարծես թե չունի:

Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը վերջին շրջանում ուսումնասիրում է քաղաքական դաշտը Քոչարյանի հնարավոր վերադարձի համար:

Նույնիսկ ընդդիմությունն է համոզված, որ այդ բոլորը սոսկ լոզունգներ են, որոնք միտված են հավաքների ժամանակ իրենց համակիրներին որոշ ժամանակով հանգստացնելու: Իսկ վերջերս հնչեցրած ելույթներից մեկում Տեր-Պետրոսյանը «ձիթենու ճյուղ» առաջարկեց Գագիկ Ծառուկյանին, որը, սակայն, խայծը կուլ չտվեց:

Մյուս կողմից, այս ամբողջ ընթացքում նախագահը աշխատում է կենսունակ պահել իր կոալիցիան, երբեմն նույնիսկ հաստատված սկզբունքներին դեմ գնալով, ինչպես օրինակ, միեւնույն պաշտոնում քաղաքավարության սիրալիրությամբ պատվելը Հայաստանյայց եկեղեցվո գերագույն հոգեւոր հովվին եւ կաթողիկոս Արամ Ա-ին: Թվում է, թե հայաստանյան կյանքի բոլոր ոլորտները քաղաքականացվում են: Քաղաքական նպատակներով կատարված քայլերն ու ոտնակոխված սկզբունքները, սակայն, կարող են չվերականգնվել ապագայում:

Վարչապետ Տիգրան Սարգսյանի վերջերս կատարած ակնարկը տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվեց: Նա նշեց, թե ովքեր չեն համագործակցի Հանրապետական կուսակցության հետ,

Նրան հետեւեց ոստիկանության պետի՝ Ալիկ Սարգսյանի հրաժարականը: Նրանից նույնպես, ըստ շրջանառվող լուրերի, պահանջել են հրաժարական տալ, որովհետեւ վստահ չեն եղել, որ կկարողանա միավորել իր կառույցում տիրող հակասական դիրքորոշումների տեր մարդկանց:

Ավելի ուշ հրաժարվողների շարքին միացավ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, որ տեղափոխվելով Հանրապետական կուսակցության շտաբի պետի պաշտոնին, շեշտեց առաջիկա խորհրդարանական ընտրությունների ճակատագրական լինելը հաջորդ տարի Սերժ Սարգսյանի վերընտրության հարցում:

Այս իրարանցման մեջ Մ. Նահանգներն իր հերթին հասկանալ է տալիս, որ անթերի կազմակերպված ընտրություններից բացի ուրիշ ոչ մի բան ընդունելի չի լինելու:

Կուսակցություններն ու կոալիցիաները, անշուշտ, շարունակելու են վերադասավորվել: Կառավարությունը փորձելու է հանրությանը ներկայանալ կատարյալ ու անթերի տեսքով, մինչդեռ հանրության աղքատ խավը իր քվեն տալու է այն կուսակցությանը, որ նրան 5 հազար դրամ է տալու:

**Դեյլի Սթար, ԱՄՆ**
**Թարգմ. Հ. Ծ.**

# Թոշակներն ու նպաստները անցած 3 տարիներին

## *Ինչպե՞ս են փոխվել եւ ի՞նչն է փոխվել*

**Անցած 3-4 տարիներին արդյունաբերության եւ գյուղատնտեսության ոլորտներում կառավարության իրականացրած հիմնական քայլերին անդրադարձանք մեր նախորդ հրապարակման մեջ՝ հիմնվելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2011 թվականների գործունեության արդյունքներ» գրքույկի տվյալների վրա: Հիշեցնենք, որ անցնող տարիները համընկել էին համաշխարհային տնտեսական ճգնաժամի եւ դրան հաջորդող ժամանակաշրջանի հետ, եւ այս առումով մեր երկրի տնտեսության համար բավական դժվար լուծելի հարցեր էին առաջադրել: Բնական է, որ դրանք էլ իրենց հերթին պետք է բերեին լրացուցիչ սոցիալական խնդիրների: Հետեւաբար, հետաքրքրական է, թե սոցիալական ի՞նչ խնդիրներ են այդ ժամանակահատվածում լուծվել եւ ի՞նչ արդյունք ունեցել: Այս մասին ամփոփ տեղեկատվությունը եւս ներկայացված է վերոնշյալ գրքույկում:**

**Սոցիալական ոլորտից, ինչպես հայտնի է, ամենամեծ գումարները հատկացվում են կենսաթոշակային ոլորտին: Ամենաբազմամարդ սոցիալապես խոցելի այս խմբում ընդգրկված է 518 հազար մարդ, որոնց ուղղվում է պետական բյուջեի ծախսերի 22-23 տոկոսը: Անցնող տարիներին կառավարությունն այստեղ երկու հիմնական բարեփոխում անցկացրեց՝ կատարելագործեց գործող համակարգը եւ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնեց նոր՝ կուտակային կենսաթոշակային համակարգ ստեղծելու ուղղությամբ:**

**Ներկայումս գործող կենսաթոշակային համակարգում ներդրվեց կենսաթոշակի ստացման անկանխիկ համակարգը, որից արդեն օգտվում է 78 հազար թոշակառու, իսկ կանխիկ ստացողները հնարավորություն ստացան ամսվա երկրորդ աշխատանքային օրը ստանալու իրենց թոշակները, ինչը հնարավոր եղավ տվյալների բազաների ճշտման, ցուցակների հստակեցման եւ այլ քայլերի շնորհիվ: Այդ միջոցառումների արդյունքում 2011-ի առաջին կիսամյակում նաեւ խնայվեց մոտ 5 մլրդ դրամ:**

**Ինչ վերաբերում է կենսաթոշակների չափին, ապա, 2008-2011-ի ընթացքում, կառավարությունը 3 անգամ բարձրացրեց բոլոր կենսաթոշակառուների եւ 2 անգամ՝ կենսաթոշակառուների առանձին խմբերի համար: 2007-ի համեմատ 2011-ին միջին կենսաթոշակը Հայաստանում ավելացել է 2,1 անգամ, իսկ բազային կենսաթոշակը՝ 2,5 անգամ: Այլ հարց է, որ, դրանով հանդերձ, այդ չափը (միջին կենսաթոշակը՝ մոտ 28 հազար դրամ) բավարար չէ թոշակառուի կենսականորեն անհրաժեշտ կարիքները հոգալու համար:**

**Փոփոխություններ են կատարվել զինվորական կենսաթոշակառուներին եւ զոհված զինծառայողներին տրվող դրամական օգնության չափերի մեջ: Այս տարվա սկզբից ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած հրամանատարական կազմի զինծառայողներին տրվող կենսաթոշակն ու դրամական աջակցությունն ավելացվել է 31-35 տոկոսով, շարքային կազմինը՝ 11-18 տոկոսով, զոհված շարքային զինծառայողի ընտանիքին տրվող գումարը՝ 21 տոկոսով: Մասնավորապես, վերջիններիս տրվող դրամական օգնության չափը սահմանվել է 30 հազար դրամ եւ սեպտեմբերից՝ 20 հազար դրամ յուրաքանչյուր երեխայի համար: Ավելացվել են նաեւ Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին եւ վետերաններին տրվող դրամական օգնությունն ու պատվովճարները:**

**Մյուս խոշոր խոցելի խումբը ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվածներն են՝ մոտ 100 հազար ընտանիք: Այստեղ կառավարությունը մշտապես հասցեականության բարձրացման խնդիր է ունենում: Անցնող տարիներին, նպաստառուների տեղեկատվական բազաների կատարելագործման արդյունքում, անապահով չհամարվող շուրջ 17 հազար ընտանիք դադարեցին նպաստ ստանալ, իսկ նպաստի համակարգի հասցեականությունը բարձրացավ 11 տոկոսով: Համաշխարհային բանկի եզրակացությամբ, ընտանեկան նպաստի հասցեականության ցուցանիշով 2011-ին Հայաստանը լավագույնն է եղել Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում:**

**Ընտանեկան նպաստի չափերը նույնպես անցած 3 տարիներին բարձրացվել են՝ 2009-ին 25 տոկոսով, 2010-ին՝ 35 տոկոսով եւ 2011-ի հուլիսի դրությամբ աղքատ ընտանիքներին տրվող միջին ընտանեկան նպաստը կազմում է 27 հազար դրամ, 2008-ի 21 հազար դրամի փոխարեն:**

**2009-ին զգալիորեն բարձրացան երեխայի ծննդյան նպաստները: Առաջին եւ երկրորդ երեխայի ծննդյան նպաստը դարձավ 50 հազար դրամ՝ մինչ այդ եղած 35 հազար դրամի փոխարեն, երրորդ եւ հաջորդող երեխայի ծննդյան նպաստը՝ 430 հազար դրամ՝ 300 հազար դրամի փոխարեն: Երեխայի խնամքի նպաստը բարձրացավ 6 անգամ եւ այժմ կազմում է 18 հազար դրամ՝ մինչ այդ եղած 3 հազար դրամի փոխարեն:**

**Սոցիալական ոլորտում կառավարության իրականացված այս քայլերի արդյունքը առավել առարկայականորեն են արտացոլում Համաշխարհային բանկի փորձագետների հաշվարկները: Համաձայն դրանց, եթե կենսաթոշակների, նպաստների եւ սոցիալական այլ ծախսերի համար վերոնշյալ հավելումները չկատարվեին, ապա ճգնաժամի հետեւանքով աղքատության մակարդակը Հայաստանում ներկայիս 34,1 տոկոսի փոխարեն կկազմեր 51,7 տոկոս: Այսինքն, մոտ 500-600 հազար մարդ զերծ մնաց աղքատների բանակը համալրելուց:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Նոր ուղի «Jaipur Foot»-ի հետ

Ազգությամբ հնդիկ Թոդրա Մալը պատմում է, որ 36 տարի առաջ փորձել է ինքնասպանություն գործել: Բարեբախտաբար Թոդրան ողջ է մնացել, սակայն ինքնասպանության փորձի հետեւանքով կորցրել է մի ոտքը: Նրա ոտքը մնացել է գնացքի անիվների տակ: Թոդրան հիմա 56 տարեկան է, ապրում եւ աշխատում է Ջայպուրում՝ Հնդկաստանի Ռաջաստան նահանգի մայրաքաղաքում:

Թոդրայի հետ ծանոթացա BMVSS ՀԿ-ում: Կազմակերպությունն ամբողջ աշխարհում առավել հայտնի է «Jaipur Foot» անունով: Հոկտեմբերի 28-ի համարում «Jaipur Foot»-ին **«Ազգը»** հակիրճ անդրադարձել է: «Jaipur Foot»-ը ոտքերի պրոթեզներ է պատրաստում եւ հաշմանդամներին տրամադրում դրանք չնչին գումարով:



Թոդրան աշխատում է «Jaipur Foot»-ում, պատմում է, որ տարիներ առաջ այստեղ եկել է իր սեփական պրոթեզը ստանալու: Այնուհետեւ աշխատանքի է անցել կազմակերպությունում եւ այսօր արդեն պրոթեզներ է պատրաստում ուրիշների համար: Թոդրան նշում է, որ կազմակերպությունն աշխատանքի է ընդունել նաեւ իր ավագ որդուն. «Եվ շնորհիվ մեր աշխատանքի կրտսեր որդիս ու աղջիկս կարողացան շարունակել իրենց ուսումը»:

Այսօր Թոդրան կարողանում է ինքնուրույն կյանք վարել եւ մի տեղից մյուս տեղը շարժվելու համար ոչ մեկի օգնությանը չի դիմում: Ասում է՝ «Jaipur Foot»-ի պրոթեզներն այնքան առաձգական են, որ դրանցով անգամ հնարավոր է վազել կամ ծառ մագլցել: Սակայն մինչ պրոթեզ ստանալը Թոդրայի կյանքը մղձավանջի էր վերածվել. «Սկսեցի ինձ ավելի վատ զգալ, սակայն ինքնասպանություն գործելու մասին այլեւս չեմ մտածել»:

Այստեղ Թոդրան միակը չէ, որը պրոթեզ ստանալուց հետո նաեւ տեղում աշխատանքի է ընդունվել: Այստեղ աշխատող հաշմանդամ մարդկանց պատմությունները իհարկե տարբեր են իրարից, սակայն բոլորին միավորում է նոր կյանք սկսելու կամ, ինչպես Թոդրան է ասում, «նորից ապրելու գաղափարը»: Հենց այս գաղափարն է առաջնորդել պարոն Մեհտային, որը տարիներ առաջ իր կյանքի մի դժբախտ պատահարից հետո որոշել է հիմնել կազմակերպությունը: Իսկ թե կոնկրետ ի՞նչ է պատահել իր հետ, պարոն Մեհտան գերադասում է չմանրամասնել:

«Jaipur Foot»-ը ստեղծվել է 1975 թվին, այսօր մասնաճյուղեր ունի աշխարհի 26 երկրներում՝ Աֆղանստանում, Վիետնամում, Նեպալում, Սուդանում, Իրաքում եւ այլն: Պարոն Մեհտան ընդգծում է. «Երկրներում, որտեղ պատերազմական գործողություններ են ընթանում, մասնաճյուղեր ունենալը մեր առաջնային խնդիրներից է, քանի որ պատերազմների պատճառով հաշմանդամների թիվն օրեցօր ավելանում է»:

Ամեն տարի տարբեր երկրներից ու Հնդկաստանի մյուս վայրերից հազարավոր մարդիկ են գալիս նաեւ Ջայպուր՝ իրենց պրոթեզները հենց տեղում գնելու համար: «Պրոթեզների պատրաստումը երկար չի տեւում. ընդամենը մի օր, եւ հիվանդն արդեն կարող է քայլել», ասում է պարոն Մեհտան, որը նաեւ ՀԿ-ի ղեկավարն է:

Ոտքի մի պրոթեզը «Jaipur Foot»-ը վաճառում է միջինը 45 դոլարով, մինչդեռ Միացյալ Նահանգներում պատրաստված նմանատիպ պրոթեզն արժե 12 հազար դոլար: Ըստ պարոն Մեհտայի՝ իրենց կազմակերպության պրոթեզների գները բոլոր երկրներում գրեթե նույնն են: «Արդեն 36 տարի մենք աշխատում ենք մարդկանց օգնելու սկզբունքով: Մեր աշխատանքը բարեգործություն չէ, սա պարզապես օգնություն է նրանց, ովքեր մեր կարիքն ունեն», ընդգծում է պարոն Մեհտան:

Իսկ պրոթեզների ամրացումն ու բժշկական ծառայությունները, անկախ հիվանդի սոցիալական վիճակից, «Jaipur Foot»-ը մատուցում է անվճար: Բնականաբար, նման առաքելության համար միայն պրոթեզների վաճառքից գոյացած գումարը բավարար չէ: Ըստ պարոն Մեհտայի՝ կազմակերպության բյուջեն համալրվում է նաեւ Հնդկաստանի կառավարության աջակցության ու նվիրատվությունների միջոցով: Պարոն Մեհտան նշում է, որ «Jaipur Foot»-ը հիմնադրվել է 10 հազար դոլարից էլ սակավ բյուջեով, բայց այսօր կազմում է արդեն 3,5 միլիոն դոլար:

Ներկայումս BMVSS-ը ոտքերի պրոթեզներ պատրաստող ամենահայտնի կազմակերպությունն է ամբողջ աշխարհում:

Հիմնադրման առաջին տարում «Jaipur Foot»-ը տրամադրել է ընդամենը 59 պրոթեզ, սակայն 36 տարիների աշխատանքի արդյունքում նորից քայլել են կարողացել հարյուրհազարավոր մարդիկ:

Հանդիպման վերջում պարոն Մեհտան խոստովանում է, որ այստեղ ինքն էլ նոր կյանք է սկսել: Իսկ «Jaipur Foot»-ի հաջողության գաղտնիքը, ըստ նրա, «թաքնված է յուրաքանչյուրիս ազնիվ ու նվիրված աշխատանքի մեջ»:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**Հնդկաստան, Ջայպուր**

# Օրտեգան վերընտրվել է Նիկարագուայի նախագահ

Նիկարագուայի նախագահ Դանիել Օրտեգան 3-րդ անգամ դարձել է երկրի նախագահ: Երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջը հաղորդում է, որ քվեաթերթիկների 85 տոկոսի մշակումից հետո պարզվել է, որ Օրտեգան ստացել է քվեների 62,6 տոկոսը:



Օրտեգայի գլխավոր մրցակիցը՝ «Անկախ ազատական կուսակցություն» դաշինքի թեկնածու Ֆաբիո Գադեան ստացել է 30,9 տոկոս: 3-րդ տեղը զբաղեցնում է Ազատական-սահմանադրական կուսակցության թեկնածու Առնոլդո Ալեմանը, որի օգտին քվեարկել է ընտրողների 6 տոկոսը:

Նախագահական ընտրություններից բացի Նիկարագուայում կիրակի օրն անցկացվում էին նաեւ խորհրդարանական ընտրություններ, որոնցում հաղթել է Օրտեգայի «Ազգային ազատագրության սանդինիստական ճակատը»: Այդ կազմակերպության օգտին քվեարկել է ընտրողների 61 տոկոսը:

Օրտեգան երկիրը գլխավորել է 1985-1990 թթ., ապա մինչեւ 2006 թվականը մնացել է այդ ժամանակահատվածում երկիրը գլխավորած աջ եւ կենտրոնամետ ուժերին ընդդիմացողների շարքերում: 2006-ի ընտրություններում նա երկրորդ անգամ ընտրվել է երկրի նախագահ:

Երկրում Օրտեգան վարում է ձախ կենտրոնամետ տնտեսական քաղաքականություն՝ ապահովելով նյութական օգնության հասկացումը չքավորներին եւ չմիջամտելով գործարար կյանքին: Մեծ մասամբ այդ քաղաքականության շնորհիվ Նիկարագուան 2010-ին ապահովել է տնտեսության 4 տոկոս աճ: Դրա հետ մեկտեղ նախագահի քաղաքական հակառակորդները նրան մշտապես ամբաստանում են ավտորիտարիզմի եւ Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսին ընդօրինակելու մեջ:

Վերընտրված նախագահը լավ հարաբերություններ ունի Ռուսաստանի հետ: Նրա կառավարման օրոք Նիկարագուան դարձավ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը ճանաչած սակավաթիվ երկրներից մեկը:

ՍԿԱՆԴԱԼ

# Օբամա-Սարկոզի. գաղտնազրույց Նաթանյահուի մասին




Կաննում օրերս անցկացված «Մեծ քսանյակի» գագաթաժողովի ոչ պաշտոնական հանդիպումների ու զրույցների ժամանակ տեղի է ունեցել մի աղմկահարույց միջադեպ, որի մասին հաղորդում է ֆրանսիական Prêt sür images կայքէջը:

Նոյեմբերի 3-ին նախագահներ Բարաք Օբամայի եւ Նիկոլա Սարկոզիի մամլո ասուլիսին սպասող լրագրողները անսպասելիորեն լսեցին նրանց առանձնազրույցը, որը նախատեսված չէր լրատվամիջոցների համար: Տվյալ դռնփակ հանդիպման ֆրանսիացի կազմակերպիչների սխալի հետեւանքով երկու նախագահների գաղտնի խոսակցության մի մասը հայտնի դարձավ հանրությանը: Մինչդեռ դա գաղտնիության կոպիտ խախտում է:

Լրագրողներին բաժանել էին էլեկտրոնային թարգմանության սարքեր, բայց չէին նախազգուշացրել, որ առանձնազրույցի բռնված երկու նախագահները դեռ պատրաստ չեն ասուլիսին: Թղթակիցները միացրել էին սարքերը՝ օգտագործելով բջջային հեռախոսների ականջակալները: Հանկարծ նրանք լսեցին, թե ինչպես Օբաման կշտամբում է Սարկոզիին, որ նա ԱՄՆ-ին չի նախազգուշացրել ՅՈՒՆԵՍԿՕ-ին Պաղեստինի անդամակցության օգտին քվեարկելու մտադրության մասին:

Այնուհետեւ առանձնազրույցում արտաբերվեց Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի անունը: «Ես այլեւս չեմ կարող նրան տեսնել. նա ստախոս է», ասաց Սարկոզին: «Դու հոգնել ես նրանից, իսկ ես ստիպված եմ մշտապես շփվել նրա հետ», արձագանքեց Օբաման: Հետո նա Սարկոզիին խնդրեց համոզել պաղեստինցիներին, որ չափավորեն ՄԱԿ-ին անդամակցելու իրենց ձգտումները:

# Ըստ եգիպտական մամուլի՝ Քադդաֆին 28 մլն դոլար է «կտակել» ահաբեկիչներին

Լիբիայի նախկին ղեկավար Մուամմար Քադդաֆին 28 մլն դոլար է «կտակել» ակաբեկիչներին, որպեսզի նրանք ապստամբներից եւ ՆԱՏՕ-ից վրեժ լուծեն իր իշխանության տապալման համար: Այդ մասին հաղորդում է եգիպտական մամուլը, վկայակոչելով Աշխատանքի արաբական կազմակերպության նախկին գլխավոր տնօրեն Իբրահիմ Կուվեյդարին: Մոտ կես տարի առաջ ահաբեկիչների հետ հանդիպման ժամանակ Քադդաֆին քննարկել է «Վրեժ վարչակարգի անկումից հետո» ծրագիրը:

Վերջինս «նախատեսում է ահաբեկչությունների իրականացում լիբիական, ինչպես նաեւ արաբական եւ եվրոպական քաղաքներում՝ փետրվարյան հեղաշրջմանն օժանդակած երկրներում», նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, վկայակոչելով Կուվեյդարին:

Նախկին գլխավոր տնօրենը նախազգուշացրել է, որ ներկայումս Եգիպտոսում են Լիբիայի նախկին իշխանությունների 148 պաշտոնյաներ, որոնք ընդհատակում գործելով՝ կարող են մի շարք քաղաքական քայլեր ձեռնարկել «ժողովրդական հեղափոխությանը վնասելու» նպատակով: Կուվեյդարը Քադդաֆիի կողմնակիցներից բխող վտանգը համարում է իրական, քանի որ նրանք, ըստ որոշ տեղեկությունների, ունեն 10 մլրդ դոլարի հասնող միջոցներ:

Մուամմար Քադդաֆին սպանվեց հոկտեմբերի 20-ին իր ծննդավայր Սիրտ քաղաքում: Գնդապետի սպանությունից 3 օր հետո Անցումային ազգային խորհուրդը հայտարարեց. «Լիբիայի լիակատար ազատագրման» մասին:

# Ուժեղ երկրաշարժ Ճապոնիայում

Նոյեմբերի 8-ին Ճապոնիայի հարավում՝ Օկինավա կղզու ափերի մոտ տեղի է ունեցել 6,8 մագնիտուդով երկրաշարժ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ էպիկենտրոնը եղել է օվկիանոսում, կղզու ափերից մոտավորապես 220 կմ հեռավորության վրա: Հնարավոր զոհերի եւ ավերածությունների մասին ոչինչ չի հաղորդվում: Տեղացի պաշտոնյաները հայտարարել են, թե ցունամիի վտանգ չկա:

Ճապոնիայում զոհերի եւ ավերածությունների հանգեցրած վերջին երկրաշարժը տեղի ունեցավ մարտին: Այն ժամանակ 8,9 մագնիտուդով երկրաշարժից եւ դրա առաջացրած ցունամիից տուժեց Հոնսյու կղզու հյուսիսարեւելյան մասը: Զոհվեց մոտ 20 հազար մարդ, տնտեսությանը պատճառված վնասը գնահատվում է 210 միլիարդ դոլար:

ԳԵՐՄԱՆԻԱ

# Քյոլնի «Հայ մշակույթի օրերը»՝ արդեն 8-րդ անգամ

Նոյեմբերի 9-ից դեկտեմբերի 3-ը Քյոլնում անցկացվող «Հայ մշակույթի օրերը» այս անգամ նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին: Քյոլնի Մայր տաճարին դիմահայաց Դոմֆորումում անցկացվող ամենամյա դարձած մշակութային միջոցառումները կազմակերպվում են գերմանահայոց առաջնորդարանի մշակույթի հանձնախմբի եւ Քյոլնի կաթոլիկական կենտրոնի համագործակցությամբ: Ինչպես նախորդների պարագայում, այնպես էլ 8-րդ անգամ անցկացվող ծրագիրը ներկայացնում է մշակութային գունեղ ներկապնակ:

Նոյեմբերի 9-ին, ժամը 19.30-ին մշակութային օրերի մեկնարկը կտրվի դասական համերգով, ելույթ կունենան Քյոլնի հայ համայնքի «Կոմիտաս» երգչախումբը (ղեկավար՝ Արտակ Ոսկանյան), 2004-ից Գելզենքիրխենի թատրոնի նվագախմբի թավջութակահարուհի պոլսահայ Կարոլին Շոլցը եւ Լիբանանի ազգային կոնսերվատորիայի շրջանավարտ, այնուհետեւ կրթությունը Գերմանիայում շարունակած դաշնակահարուհի Մարի Ավետիսը: Երկու տարվա համագործակցությունը երաժիշտներին առիթ է տվել առավել հաճախ անդրադառնալ հայ դասականների ստեղծագործություններին: Դոմֆորումի հանդիսատեսին Շոլց- Ավետիս դուոն կմատուցի Սիրվարդ Կարամանուկի, Բարսեղ Կանաչյանի, Ռոմանոս Մելիքյանի եւ Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործություններից:

Նոյեմբերի 12-ի ժամը 11-ին Դոմֆորումը կհյուրընկալի հայոց լեզու սովորել ցանկացողներին: Դյուսելդորֆի VHS-ում (ժողովրդական բարձրագույն դպրոցում) հայոց լեզու դասավանդող Հասմիկ Հակոբյանը կներկայացնի Մաշտոցի այբուբենն ու կծանոթացնի ժամանակակից հայոց լեզվին՝ հետաքրքրվողներին՝ առիթ տալով մասնակցել VHS-ի կազմակերպած վճարովի դասընթացներին:

Նույն օրը երեկոյան ժամը 19.30-ին Քյոլնի Ս. Սահակ- Մեսրոպ եկեղեցում հայ օպերային երգեցողության նմուշներ կներկայացնեն Արթուր Բաղդասարյանը (բարիտոն) եւ Էդվին Գալիփյանը (դաշնամուր):

Նոյեմբերի 23-ի ժամը 19.30-ից Դոմֆորումում ֆիլմ երեկո է: Ցուցադրվելու է 2008-ին գերմանական կարճամետրաժ ֆիլմերի փառատոնի մրցանակակիր «Cosmik Station» («Տիեզերակայան») 30-րոպեանոց վավերագրական ֆիլմը, որ ներկայացվել է նաեւ երեւանյան «Ոսկե ծիրան» փառատոնին: Ֆիլմի ավարտին նախատեսված է հանդիպում-զրույց հեղինակի՝ մյունխենցի ռեժիսոր Բեթթինա Թիմմի հետ: Երեկոյի երաժշտական բաժինը ներկայացնելու է բազմաթիվ մրցույթների դափնեկիր նախկին հայաստանաբնակ դաշնակահարուհի Մարիամ Տոնոյանը:

Նոյեմբերի 25-ին, ժամը 19.30-ին բեմը կտրամադրվի ֆրանկֆուրտաբնակ երգիչ-երգահան Էմիրզյանին, ում՝ 2010-ի մշակութային օրերի շրջանակներում կայացած ելույթն այնքան է տպավորել ունկնդրին, որ կազմակերպիչները որոշել են այս տարի էլ նրա մասնակցությամբ գոհացնել Էմիրզյանի դոմֆորումյան երկրպագուներին: Երգիչը հանդես է գալու նոր ծրագրով, ուր ընդգրկված են հայերեն եւ անգլերեն երգեր: Համերգի ավարտին տեղի կունենա Էմիրզյանի նոր ձայնասկավառակների վաճառքը, որ կուղեկցվի ընծայագրով:

Նոյեմբերի 27-ին ժամը 11-ին Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում մատուցվող պատարագին, որ մշակութային օրերի բաղկացուցիչ մասն է, կհիշատակվեն 2010-ին մահկանացուն կնքած մշակութային ասպարեզում մեծ վաստակ ունեցող գերմանահայերի անունները:

«Ժողովրդի հոգին կարող ես ճանաչել նրա ստեղծած գրականությունը կարդալով», այս բանաձեւն է ուղղորդել լեզվաբանության դոկտոր Կատարինա Բերնդտին սեփական ընտրությամբ եւ քյոլնաբնակ դերասան Անդրեաս Պոտուլսկու ընթերցանությամբ ներկայացնել ինչպես հայ գրականության, այնպես էլ Հայաստանի մասին ստեղծված գեղարվեստական նմուշներ: Հատընտիր՝ Պուշկինից, Մանդելշտամից, Բիտովից, Վերֆելից, Սարոյանից, Չարենցից, Սեւակից, նաեւ՝ հայկական հեքիաթներ: Դեկտեմբերի 2-ին, ժամը 19.30-ին մշակութային օրերը եզրափակող գրական վերոհիշյալ երեկոն կուղեկցվի «Cologne World Jazz Ensemble»-ի (Լիլիթ Տոնոյան՝ ջութակ, Յոնաս Դունքել՝ բաս, Ադրիան Վախտվիակ՝ դաշնամուր, Տիմոֆեյ Բիրուկով՝ հարվածային գործիքներ) կատարումներով:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Եգիպտական մշակույթի օրերը շարունակվում են



«**Ազգը**» իր ընթերցողներին տեղեկացրել էր նոյեմբերի 4-11-ը Հայաստանում մեկնարկող Եգիպտական Արաբական Հանրապետության մշակույթի օրերի մասին: Այն բացվեց Հայաստանի գրողների միության տանը կազմակերպված Հուսամ Նասսարի «Մոլորված փնտրում եմ երկիր» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսով: ՀԳՄ նախագահ **Լեւոն Անանյանը** ողջունեց եգիպտական պատվիրակությանը, որը գլխավորում էր ԵԱՀ-ի մշակույթի նախարարի առաջին տեղակալ, բանաստեղծ **Հուսամ Սաադ Զաղլուլ Նասսարը**: Պրն Անանյանը բարձր գնահատեց հայ-եգիպտական դարավոր բարեկամությունը, որի հետքերը գալիս են 4-րդ դարից եւ մինչ օրս էլ ավելի ամրանում է: Այնուհետեւ անդրադառնալով միջազգային գրական կապերին նշեց, որ առաջին անգամ հայ ընթերցողի դատին է հանձնվում ժամանակակից եգիպտացի բանաստեղծ Հուսամ Նասսարի «Մոլորված փնտրում եմ երկիր» խորագիրը կրող ժողովածուն, որը բանալի է տալիս, թե ով է եւ ինչ է Եգիպտոսը, եգիպտացին ու նրա կենցաղը, անցյալի կորսված մշակույթը: ՀՀ մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը** բարձր գնահատեց ու գոհունակությամբ նշեց, թե մեկ տարի առաջ ինչպիսի ջերմությամբ ու բարձր մակարդակով անցան «Հայկական մշակույթի օրերը» Եգիպտոսում: ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի տնօրեն բան. գիտ. դոկտոր **Ավիկ Իսահակյանը** նշեց, որ երկար սպասումից հետո հայ ընթերցողին է ներկայացվում 20-րդ դարի եգիպտական ժամանակակից պոեզիան: Հուսամ Նասսարին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար ու ասաց. «Այսօրվա հանդիպումը կարծես ճակատագրի նվերն է եւ Աստծո կողմից է իրականացվում: Իմ բանաստեղծությունները շատ լեզուներով են հրատարակվել, սակայն հայերենով առաջին ժողովածուն է եւ դրա համար հատուկ շնորհակալ եմ նախ Աստծուց, հետո թարգմանիչ Հովիկ Հովեյանից ու արաբերենից տողացի թարգմանությունը իրականացրած Հովհաննես Ասատրյանից: Ես բարձր եմ գնահատում Եգիպտոսում հայերի ներդրումները, նրանք մեզ հետ հավասար մեծ դեր ունեն մեր երկրի զարգացման հարցում»: Բանաստեղծ, թարգմանիչ **Հովիկ Հովեյանը, Հովհաննես Ասատրյանը** եւ այլք բարձր գնահատեցին եգիպտական ժամանակակից պոեզիան եւ Նասսար Հուսամի խոհափիլիսոփայական բանաստեղծությունները, որոնցում մշտարթուն որոնումների, ցավի, կորստյան ու լույսի երգն է արտացոլվում: Նասսարի պոեզիայի ընթերցումներով հանդես եկավ **Հռիփսիմե Սարգսյանը**, որից հետո հեղինակը չկարողացավ թաքցնել հիացմունքը ու ասաց. «Ես ապշած եմ, թե ինչպես ճիշտ է թարգմանված: Չնայած ես հայերեն ընդամենը երկու բառ գիտեմ, բայց ասմունքից հասկացա, թե որ բանաստեղծություններն ընթերցվեցին: Սա է հենց թարգմանության հաջողությունը եւ ես կարծում եմ, որ հայ-եգիպտական գրական կամուրջը կշարունակվի»:



## Եգիպտոսը լուսանկարներում

Հայաստանի Ազգային պատկերասրահում հանդիսավորությամբ բացվեց «Եգիպտոսը լուսանկարներում» խորագրով ցուցահանդեսը: Բացմանը ներկա էր նաեւ ՀՀ-ում Եգիպտոսի դեսպան **Ալաա Էլլեյսին,** որ ողջունեց երկու երկրների ջերմ ու դարավոր մշակութային կապերը: Մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը, Նասսար Հուսամը բացեցին ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին 49 լուսանկարներ՝ Եգիպտոսի տարբեր ժամանակաշրջանները ներկայացնող, ինչպես նաեւ Հայաստանի Չարենցի գրականության ու արվեստի թանգարանում պահվող Ալեքսանդր Սարուխանի 35 ծաղրանկարները:

## Կահիրեի երկու բալետները հայկական բեմում

Եգիպտական մշակույթի օրերի շրջանակներում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում առաջին անգամ հանդես եկան Կահիրեի օպերայի եւ բալետի ընկերության «Անկախ ամեն ինչից» եւ «Եգիպտական գիշերներ» մեկ գործողությամբ երկու բալետները: Հայ-եգիպտական բալետային արվեստի շուրջը եղան պայմանավորվածություններ փոխայցելություններ եւ համատեղ բեմադրություններ կազմակերպելու վերաբերյալ: Ի դեպ, Եգիպտոսում գործում է երկու օպերային թատրոն՝ Ալեքսանդրիայում եւ Դամանհուրում, որտեղ անցած տարի հրաշալի հանդես եկավ Հայաստանից մշակույթի օրերին մասնակցող Թաթուլ Ալթունյանի անվ. երգի-պարի անսամբլը:

## Նոր մշակութային համագործակցության համաձայնագրեր

Երեկ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ ԵԱՀ-ի մշակույթի նախարարի առաջին տեղակալ Հուսամ Սաադ Զաղլուլ Նասսարը ստորագրեցին նոր մշակութային համագործակցության համաձայնագիր, որով նախատեսվում է համագործակցել ու խրախուսել 2 երկրների միջեւ թատերարվեստի եւ երաժշտարվեստի բնագավառներում, կերպարվեստի, կինոյի, կիրառական արվեստի բնագավառներում:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Ասմունքի փառատոնի ժյուրին հյուրընկալվեց Արարատի եւ Լոռու մարզերում

Ինչպես տեղեկացրել էինք, «Հանրապետական ասմունքի մանկապատանեկան մրցույթ-փառատոնը», որն այս անգամ նվիրված է արեւմտահայ պոեզիային եւ որն անցկացվում է Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո, մեկնարկել է: Փառատոնի ժյուրին արդեն լսել ու ընտրել է Շիրակի, Արարատի եւ Լոռու մարզերից փառատոնին մասնակցած շուրջ 9500 ասմունքողների, որոնցից լավագույնները կմասնակցեն հանրապետական եզրափակիչ փուլին:

Արարատի մարզպետի տեղակալ **Սամվել Մինասյանը** թիվ 19 դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ դիմավորեց փառատոնի ժյուրիին, որի կազմում են հանրապետության ճանաչված եւ անվանի բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, ՀՀ ժող. արտիստ Գուժ Մանուկյանը, բան. գիտ. թեկնածու Կարո Վարդանյանը, ՀՀ վաստակավոր արտիստներ Բորիս Պետանյանը, Սամվել Բաղինյանը, Սարգիս Նաջարյանը, Սեմ Ասատրյանը, Ջուլիետա Ստեփանյանը, Նադեժդա Սարգսյանը, երգչուհիներ Էմմին եւ այլք, ողջունեց ու կարեւորեց հատկապես արեւմտահայ պոեզիային անդրադառնալու հանգամանքը: Մինչ ժյուրին կլսեր մասնակիցներին, դպրոցի երգչախումբը կատարեց Միսաք Մանուշյանի բանաստեղծության վրա գված «Կարմիր ծաղիկ գարունքի» երգը,




որով էլ ազդարարվեց մարզային եզրափակիչ փուլի մեկնարկը: Մարզի 132 դպրոցներից 3500 աշակերտներից մարզային եզրափակիչ փուլին մասնակցում էին՝ երկու տարիքային խմբերում 35 լավագույն ասմունքողներ, որոնցից 6-ը անցան եզրափակիչ փուլ: Պրն Մինասյանը մարզպետ Է. Բարսեղյանի անունից շնորհավորեց ու նվերներ հանձնեց ե՛ւ 6 մրցանակային տեղեր գրավածներին, ե՛ւ բոլոր 35 մասնակիցներին ու մաղթեց, որ ինչպես նախորդ փառատոնին՝ այս մեկում էլ մարզից ոչ թե մեկ, այլ երկու հաղթողներ ճանաչվեն:

Փառատոնի մարզային եզրափակիչ փուլն ավարտվեց ՀՀ վաստ. արտիստ Սարգիս Նաջարյանի հրաշալի ասմունքով:

Ժյուրիին հաջորդ օրը սպասում էին Լոռու մարզում: Վանաձորի մշակույթի վարչության պետ **Արամ Ռեւազյանը** մարզպետի անունից ողջունեց փառատոնի ժյուրիին: Մարզի 112 դպրոցների 3200 աշակերտներից երկու տարիքային խմբում 29 մասնակցում էր մարզային եզրափակիչ փուլին եւ նրանցից 6-ը հնարավորություն ստացան մրցելու հանրապետական եզրափակիչ փուլում: Փառատոնի ժյուրիի անդամ Կարո Վարդանյանը հանդես եկավ հրաշալի դասախոսությամբ, որը նվիրված էր Վահան Թեքեյանի, Ռուբեն Սեւակի, Միսաք Մեծարենցի եւ Պետրոս Դուրյանի կյանքին ու գրական ժառանգությանը: Իսկ ՀՀ վաստ. արտիստ Սամվել Բաղինյանը ներկաների համար ընթերցեց հայ պոեզիայի գանձերից:

**Ս. Մ.**

# Հայ շախմատիստների հաղթական օրը

Շախմատի Եվրոպայի թիմային առաջնության 6-րդ տուրը հաղթական էր Հայաստանի հավաքականների համար: Տղամարդկանց հավաքականը 2,5-1,5 հաշվով հաղթեց իտալացիներին, իսկ մեր շախմատիստուհիները 3-1 հաշվով պարտության մատնեցին հույներին:



Իտալացիների հետ մրցավեճում մեր թիմի հաղթանակն ապահովեց 4-րդ խաղատախտակի վրա հանդես եկող Գաբրիել Սարգսյանը: Նա գեղեցիկ ոճով պարտության մատնեց Լուիս Արիզմենդիին: Պարտիայի վերջնախաղում Գաբրիելը զոհաբերեց նավակը՝ փոխանակելով մրցակցի ձիու հետ: Փոխարենը նա երկու անցողիկ զինվոր ուներ, որոնք էլ վճռեցին պարտիայի ելքը: 36-րդ քայլին իտալացի շախմատիստը հանձնվեց:

Մյուս երեք պարտիաներում գրանցվեց ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Լեւոն Արոնյանն ու Ֆրանցիսկո Վալյեխոն, Իվան Սալգադոն ու Սերգեյ Մովսիսյանը, Վլադիմիր Հակոբյանն ու Միգել Իլիեսկասը:

Հայաստանի կանանց հավաքականին հաղթական միավորներ պարգեւեցին Լիլիթ Մկրտչյանն ու Նելլի Աղինյանը, որոնք առավելության հասան համապատասխանաբար Մարիա Բոտսարիի եւ Եկատերինա Պավլիդոյի նկատմամբ: Էլինա Դանիելյանը հաշտություն կնքեց Ելենա Դեմբոյի հետ: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Լիլիթ Գալոյանի մրցավեճը Եկատերինա Ֆակիրիդոյի հետ:

Այս հաղթանակներից հետո մեր հավաքականները զգալիորեն բարելավեցին մրցաշարային գործերը: Հայաստանի տղամարդկանց հավաքականը 9 միավորով տեղափոխվեց 4-րդ հորիզոնական: Նույնքան միավոր են վաստակել նաեւ Ֆրանսիայի եւ Գերմանիայի շախմատիստները: 10-ական միավորով աղյուսակը գլխավորում են Բուլղարիայի, Ռումինիայի եւ Ադրբեջանի հավաքականները: Բուլղարիայի ընտրանին ոչ-ոքի խաղաց ֆրանսիացիների հետ: Ռումինացիները 2,5-1,5 հաշվով հաղթեցին հույներին: Նույնպիսի հաշվով ադրբեջանցիները պարտության մատնեցին ռուսներին: Մրցախաղի ելքը վճռեց Ռաջաբովի հաղթանակը Սվիդլերի նկատմամբ: Գերմանացիները 3-1 հաշվով հաղթեցին իսպանացիներին:

Հայաստանի կանանց հավաքականը 8 միավորով 8-րդ տեղում է: 11 միավորով առաջատարը ռուսներն են, որոնց առաջին անգամ չհաջողվեց հաղթել՝ լեհերի հետ մրցախաղն ավարտելով ոչ-ոքի: Ուկրաինացիները 2,5-1,5 հաշվով հաղթելով վրացիներին, 10 միավորով զբաղեցնում են 2-րդ տեղում: 9 միավորով լավագույն եռյակը եզրափակում են լեհերը:

# Երիտասարդական հավաքականը սկսել է նախապատրաստությունը

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը սկսել է առաջիկա ընտրական մրցախաղերի նախապատրաստությունը: Նոյեմբերի 11-ին մեր ընտրանին «Հանրապետականում» կհյուրընկալի չեխերին, իսկ 4 օր անց նույն մարզադաշտում կմրցի Ուելսի հավաքականի հետ: Նոյեմբերի 8-ից Հայաստանի երիտասարդական հավաքականն ուսումնամարզական հավաք է անցկացնում ֆուտբոլի ակադեմիայում:




Հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանն ուսումնամարզական հավաքի է հրավիրել 23 ֆուտբոլիստի: Նրանցից 5-ը լեգեոնականներ են: Առաջին անգամ երիտասարդական հավաքական է հրավիրվել Լեհաստանի «Լոձ» թիմում հանդես եկող Աղվան Պապիկյանը, որը վերջերս Հայաստանի մինչեւ 19 տարեկանների հավաքականի կազմում մասնակցեց Երեւանում անցկացված ընտրական մրցաշարին: Ֆրանսիայի «Էուպենում» է խաղում կիսապաշտպան Աշոտ Սարդարյանը: Մյուս 3 լեգեոնականներին հայ մարզասերները լավ են ճանաչում: Նրանք բազմիցս հանդես են եկել հավաքականի կազմում: Մարզումներին մասնակցում են կիսապաշտպաններ Մասիս Ոսկանյանը («Ռոզելար», Բելգիա) եւ Արտակ Ալեքսանյանը («Խիմկի», Ռուսաստան), ինչպես նաեւ հարձակվող Գեւորգ Բադալյանը («Բանիկ», Չեխիա):

Հավաքին մասնակցող մյուս 18 ֆուտբոլիստները հանդես են գալիս հայկական ակումբներում: Դարպասապահներ Արսեն Պետրոսյանը, Կարեն Իսրայելյանը եւ Գոռ Մանուկյանը «Փյունիկից» են: Պաշտպաններից հավաքի են հրավիրվել փյունիկցիներ Վարազդատ Հարոյանը, Արման Հովհաննիսյանը, Տարոն Ոսկանյանն ու Կամո Հովհաննիսյանը, «Բանանցի» խաղացողներ Հովհաննես Համբարձումյանն ու Գագիկ Դաղբաշյանը, Անդրանիկ Ոսկանյանը («Միկա») եւ գանձասարցի Ալեն Համբարձումյանը:

Կիսապաշտպաններից հրավիրվել են փյունիկցիներ Ղուկաս Պողոսյանը, Արտակ Եդիգարյանը եւ Էդգար Մալաքյանը, «Բանանցի» ֆուտբոլիստներից Վալտեր Պողոսյանն ու Դավիթ Սուջյանը: Հարձակվողներից բացի Գեւորգ Բադալյանից, մարզվում են փյունիկցի Հովհաննես Հովհաննիսյանն ու Գեւորգ Կարապետյանը:

Հայաստանի երիտասարդական հավաքականը հաջող է հանդես գալիս Եվրո-2013-ի ընտրական մրցաշարում: Անցկացրած 3 հանդիպումներում վաստակած 7 միավորով մեր ընտրանին գլխավորում է ընտրական 3-րդ խմբի աղյուսակը: Նույնքան միավոր ունի նաեւ մեր առաջիկա մրցակից Չեխիայի ընտրանին: Այնպես որ չեխերի հետ հանդիպումը սկզբունքային նշանակություն ունի:

ՀՀ հավաքականն ընտրական մրցաշարը սկսեց Չեռնոգորիայի հավաքականի նկատմամբ Երեւանում տոնած խոշոր հաշվով (4-1) հաղթանակով: Այնուհետեւ հայ ֆուտբոլիստները հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեցին Անդորրայի հավաքականին, ապա ոչ-ոքի (1-1) խաղացին չեխերի հետ: Մեր հավաքականը հիանալի հնարավորություն ունի խմբում գրավելու 1-ին տեղը եւ եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճելու: Դրա համար անհրաժեշտ է առաջիկա 2 հանդիպումներում էլ հաղթել մրցակիցներին:



# Ժակ Սուքիասյանի սիրտը դադարեց բաբախելուց

**71 տարեկանում սրտի կաթվածից մահացել է հայկական ֆուտբոլի անվանի վետերան Ժակ Սուքիասյանը: Ֆուտբոլային առաջին քայլերը Սուքիասյանը կատարել է ծննդավայրում՝ Բեյրութում: Արդեն պատանեկան տարիներին նա իր հասակակիցների մեջ աչքի էր ընկնում գնդակի հետ վարման տեխնիկայով, արագաշարժությամբ: Պատահական չէ, որ մարզիչները նրան առջեւի գծում էին խաղացնում:**

**Հայաստան ներգաղթելով, Ժակ Սուքիասյանն ընդգրկվեց Գյումրիի «Շիրակի» վարպետների թիմում՝ մասնակցելով ԽՍՀՄ Բ խմբի առաջնությանը: «Շիրակում» էլ երիտասարդ ֆուտբոլիստն աչքի էր ընկնում իր գրագետ գործողություններով ու արդյունավետ խաղով: Ուստի պատահական չէ, որ շուտով նրան հրավիրեցին հանրապետության ֆուտբոլային գլխավոր թիմ՝ Երեւանի «Արարատ», որի կազմում Սուքիասյանը հաջողությամբ հանդես եկավ 1960-1963-ին:**

**Ավարտելով ելույթները մեծ ֆուտբոլում, Ժակ Սուքիասյանն անցավ մարզչական աշխատանքի, իսկ հետագայում տեսչական աշխատանք էր կատարում ֆուտբոլի ֆեդերացիայում: Նա որպես մարզիչ աշխատել է նաեւ Երեւանի «Արարատում»: Մասնավորապես 1984-ին, երբ Նիկիտա Սիմոնյանը կրկին գլխավորել էր «Արարատը», Ժակ Սուքիասյանը նրա օգնականն էր: Երկար տարիներ նա որպես մարզիչ աշխատել է ֆուտբոլի հանրապետական մարզադպրոցում՝ ֆուտբոլիստներ պատրաստելով մեր մի շարք թիմերի համար:**

**Կյանքում Ժակ Սուքիասյանը համեստ ու ընկերասեր անձնավորություն էր, մշտապես ներկա էր գտնվում ֆուտբոլային հանդիպումներին, իր խորհուրդներով օգնում երիտասարդ մարզիչներին:**

**ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը եւ ֆեդերացիայի կոլեկտիվը ցավակցել են Ժակ Սուքիասյանի հարազատներին: «Ազգի» մարզական բաժինը միանում է նրանց:**

# Լեգենդար բռնցքամարտիկը հեռացավ կյանքից

ԱՄՆ-ում 68 տարեկանում մահկանացուն կնքեց պրոֆեսիոնալ լեգենդար բռնցքամարտիկ Ջո Ֆրեյզերը: Նրա անունը համաշխարհային բռնցքամարտի պատմության մեջ մտել է որպես առաջին բռնցքամարտիկ, ում հաջողվել է հաղթել անպարտելի Մոհամեդ Ալիին: Ֆրեյզերը մահացել է լյարդի քաղցկեղից:



Ջո Ֆրեյզերը հայտնի էր ձախ բռունցքով հուժկու հարվածներով, որոնցով մի շարք բռնցքամարտիկների նոկաուտի է ենթարկել:

Իր առաջին մենամարտը Ֆրեյզերն անցկացրել է 1965-ի օգոստոսի 16-ին: Վերջին անգամ նա ռինգ է դուրս եկել 1981-ի դեկտեմբերի 3-ին: Պրոֆեսիոնալ ռինգում Ֆրեյզերը 37 մենամարտ է անցկացրել, որոնցից 32-ում հաղթել է, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է 4 պարտություն: Նա պարտվել է միայն 2 բռնցքամարտիկի՝ Մոհամեդ Ալիին եւ Ջորջ Ֆորմանին: 1964-ին Ֆրեյզերը դարձել էր օլիմպիական չեմպիոն, իսկ 1970-ին նվաճել էր WBC-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի չեմպիոնի տիտղոսները:

Անմոռանալի են Ջո Ֆրեյզերի եւ Մոհամեդ Ալիի միջեւ կայացած 3 մենամարտերը: Դրանցից առաջինը կայացել է 1971-ին հանրահայտ «Մեդիսոն Սկվեր Գարդենում»: Այն անվանեցին դարի մենամարտ: Այդ մենամարտում հաղթեց Ֆրեյզերն՝ առաջին անգամ պարտության մատնելով անպարտելի Ալիին:

1974-75-ին կայացան հաջորդ 2 մենամարտերը, որոնցում արդեն հաջողությունն ուղեկցեց Մոհամեդ Ալիին: Հատկապես դրամատիկ պայքարում ընթացավ նրանց 3-րդ մենամարտը, որը կայացավ 1975-ի սեպտեմբերին Ֆիլիպիններում Կեսոն Սիթի քաղաքում, 30 աստիճան շոգի պայմաններում: 14-րդ ռաունդում երկու բռնցքամարտիկներն էլ ահավոր հոգնել էին: Ֆրեյզերի դեմքը լրիվ արյունոտվել էր ու նրա մարզավկաները որոշեցին 14-րդ ռաունդից հետո դադարեցնել մենամարտը: Հետագայում Մոհամեդ Ալին խոստովանել էր, որ եթե մենամարտը չդադարեցվեր, ապա ինքը կպարտվեր, քանի որ այլեւս ուժ չէր մնացել:

# Մահացել է Վալենտին Իվանովը

**Մոսկվայում 77 տարեկանում մահացել է խորհրդային անվանի ֆուտբոլիստ եւ մարզիչ, 1956-ի օլիմպիադայի եւ 1960-ի Եվրոպայի չեմպիոն Վալենտին Իվանովը:**

**Մեծ ֆուտբոլում Վալենտին Իվանովը հայտնվեց 1953-ին՝ ընդգրկվելով Մոսկվայի «Տորպեդոյի» հիմնական կազմում: Նրա ֆուտբոլային կարիերայի ամենահաջող մրցաշրջանը 1960-ն էր, երբ «Տորպեդոն» նվաճեց երկրի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսները, իսկ ԽՍՀՄ հավաքականը դարձավ Եվրոպայի չեմպիոն: Իվանովը հավատարիմ մնաց իր հարազատ կոլեկտիվին՝ 14 տարի հանդես գալով «Տորպեդոյում»: Նա աչքի էր ընկնում իր ռմբարկուի հատկանիշներով՝ ընդգրկվելով Գրիգորի Ֆեդոտովի անվան «100-ի ակումբում»: Իվանովը «Տորպեդոյի» բոլոր տարիների լավագույն ռմբարկուն է՝ պաշտոնական մրցումներում խփելով 166 գնդակ:**

**1967-ին ավարտելով ելույթները թիմում, Իվանովը գլխավորեց «Տորպեդոն»: Նորամուտը գլխավոր մարզչի պաշտոնում շատ հաջող ստացվեց: 1968-ին «Տորպեդոն» նվաճեց երկրի գավաթն ու դարձավ բրոնզե մրցանակակիր: Հետագայում նրա գլխավորությամբ «Տորպեդոն» դարձավ երկրի չեմպիոն (1976-ին), երկու անգամ (1972, 1986-ին) նվաճեց ԽՍՀՄ գավաթը, նույնքան անգամ էլ (1972, 1986-ին) արժանացավ բրոնզե մեդալների:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը այցելել է Բրյուսել

Բելգիայի Թագավորություն կատարած այցի ընթացքում ԱԱԽ քարտուղար, «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ **Արթուր Բաղդասարյանի** գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Ուիլֆրեդ Մարտենզի հետ: Հանդիպման ընթացքում երկուստեք դրական են գնահատվել Եվրոպական ժողովրդական կուսակցության եւ «Օրինաց երկիր» կուսակցության միջեւ ծավալված սերտ համագործակցության հեռանկարները: Կարեւորվել է համագործակցության հետագա խթանմանն ուղղված նոր քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը: Արթուր Բաղդասարյանը կարեւորել է երկկողմ հանդիպումների անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ դրանք հնարավորություն են ընձեռում առավել արդյունավետորեն ներկայացնել կուսակցության նպատակները, արժեքները եւ գործունեության ուղղությունները, որոնք լիովին համահունչ են ԵԺԿ-ի դավանած արժեքներին: Ուիլֆրեդ Մարթենզը համոզմունք է հայտնել, որ երկու կուսակցությունների միջեւ համագործակությունը շարունակական վերելք է ապրելու:

Արթուր Բաղդասարյանը հանդիպումներ է ունեցել նաեւ Եվրոպառլամենտում Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Հոլանդիայի ներկայացուցիչների հետ եւ քննարկել հետագա համագործակցության խթանմանն առնչվող հարցեր:

Այնուհետեւ Արթուր Բաղդասարյանը մասնակցեց Եվրոպառլամենտի քաղաքական համաժողովին, որտեղ քննարկվել է «Օրինաց երկիր» կուսակցության անդամագրումը Եվրոպական ժողովրդական կուսակցությանը: Իր ելույթում Արթուր Բաղդասարյանը ներկայացրել է «Օրինաց երկիր» կուսակցության պատմությունը եւ գործունեության հիմնական ուղղությունները եւ կատարել է հետեւյալ շեշտադրումները. «ՕԵԿ-ը եղել եւ մնում է Հայաստանում ակտիվ բարեփոխումների անցկացման ջատագովը: Մենք Հայաստանի եվրոինտեգրման հաստատուն աջակիցներից ենք եւ շատ ջանքեր ենք գործադրում բարեփոխումները առաջ մղելու համար: Մենք պետք է կարողանանք խորացնել եվրոպական արժեքներին համահունչ բարեփոխումները մեր երկրում: Այսօր աշխարհում շուրջ 7 մլն հայություն է ապրում, որից 1 մլն Եվրոպայում, 2.5 մլն ՌԴ-ում, ավելի քան 1 մլն. Միացյալ Նահանգներում: Սա նշանակում է, որ մենք պետք է վարենք հավասարակշռված արտաքին քաղաքականություն՝ հավատարիմ մնալով մեր ազգային արժեքներին, միեւնույն ժամանակ կարողանանք ինտեգրվել քաղաքակիրթ եվրոպական ընտանիքին: Հայաստանն այսօր ռազմավարական գործակցության մեջ է Ռուսաստանի հետ, մենք արդյունավետորեն համագործակցում ենք ԵՄ-ի հետ, շարունակում ենք ԱՊԳԾ շրջանակներում համագործակցությունը Հյուսիս-ատլանտյան դաշինքի հետ: Հայաստանը փոքր երկիր է, բայց ունի մեծ սփյուռք, որը եւ մեզ հնարավորություն է տալիս ավելի լավ ներկայանալ աշխարհին: Տարածաշրջանում մենք հանդես ենք գալիս խաղաղության եւ համագործակցության դիրքերից եւ պաշտպանում ենք կառուցողական մոտեցումները: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերը Թուրքիայի նախագահին՝ այցելելու Հայաստան, դրա վառ օրինակներից էր: Մենք համոզված ենք, որ ռազմատենչ հայտարարությունները եւ փակ սահմանները ապագա չունեն: Ներքին կյանքում մենք բարեփոխումների ջատագով ենք հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: «Օրինաց երկիրը» շուրջ 200 օրենքի հեղինակ է, եւ դրանց հիմնական մասը ռեֆորմիստական բնույթի են: Փոփոխությունները անխուսափելի են, առաջընթացը՝ անկասելի: Սրանք արժեքներ են, որոնց համար մենք պետք է պայքարենք: Առաջընթացի հույսը շատ ավելի կարեւոր է, քան սոսկ անցյալի ցավալի դժվարությունները: Ինքս որպես քաղաքական գործիչ նպաստել եմ Հայաստանում Եվրոպական կրթական համակարգի ստեղծմանը: Ներկայումս հանդիսանում եմ երկու հանրային կրթական հաստատությունների՝ Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամի եւ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի հոգեբարձուների խորհրդի նախագահն եմ: Համոզված եմ, որ եվրոպական արժեքներով ու ազգային ինքնատիպությամբ դաստիարակված սերունդը մրցունակ կլինի: Հենց մրցունակությունն է այսօր պակասում մեզ: Մրցունակ լինել քաղաքականության մեջ, տնտեսության ոլորտում, արտաքին միջավայրում: Հայաստանը կարող է լինել այդպիսին, եւ ես վստահ եմ, որ ձեռնարկված եւ ձեռնարկվելիք բարեփոխումները մեր երկիրը տանելու են հենց առաջընթացի ու զարգացման ճանապարհով: ԵԺԿ-ին անդամակցությունը նույնպես ապագայի մի կամուրջ է, եւ ես վստահ եմ, որ ձեր աջակցությամբ մենք կհաղթահարենք սպասվելիք դժվարին, բայց պատվաբեր ճանապարհը»:

# Հայաստան-Իրան՝ ոչ մի խնդիր

*1-ին էջից*

Այս ամենին էլ վրադիր՝ Իրանն ու Հայաստանն, ըստ Սալեհիի, «շատ մոտ» տեսակետներ ունեն տարածաշրջանային ու միջազգային շատ հարցերում, ընդ որում, Իրանի ջանքերն ուղղված են տարածաշրջանում կայունությանն ու խաղաղությանը: «Համոզված եղեք, որ Իրանը՝ որպես բարեկամ երկիր, մշտապես հաստատակամ եւ նվիրված է լինելու Հայաստանի հետ հարաբերությունների զարգացմանը», արդեն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանն ասել է Ալի Աքբար Սալեհին:

Ընդունելով Իրանի արտաքին գործերի նախարարին՝ Հայաստանի նախագահը լավ հնարավորություն է համարել Հայաստանի եւ Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելությունները՝ առկա փոխգործակցության հարուստ օրակարգի, ինչպես նաեւ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման ընթացքի քննարկման ու նոր ծրագրերի նախանշման տեսանկյունից:

### ՄԱԳԱՏԷ-ի զեկույցը՝ Իրանին ճնշելու նպատակով

Իրանի միջուկային ծրագրի մասին ՄԱԳԱՏԷ-ի սպասվող զեկույցի առնչությամբ Նալբանդյանի հետ համատեղ ասուլիսում հնչած հարցին Իրանի արտգործնախարարը նախ արձագանքեց ընդհանրական՝ մեկնաբանելով, որ այդ զեկույցի եւ դրանում բերվող փաստարկների նպատակը Իրանի վրա ճնշում գործադրելն է:

Ըստ Սալեհիի, որ ժամանակին ներկայացրել է Իրանը ՄԱԳԱՏԷ-ում, ինչպես նաեւ ղեկավարել է Իրանի միջուկային էներգիայի հարցերով կառույցը, Իրանի միջուկային ծրագրի հարցի արեւմտյան մոտեցումը զուտ քաղաքական է, հասկապես որ, իրանցի դիվանագետի վստահեցմամբ, ՄԱԳԱՏԷ-ն չի կարող որեւէ կերպ միջամտել մի հարցում, որը ոչ միջուկային է: Իսկ այդպիսին, ըստ Սալեհիի, կարող է համարվել հրթիռների հարցը, ավելին, միջուկային մարտագլխիկները որեւէ կապ չունեն միջուկային զենքի հետ:

Ամեն դեպքում, Սալեհիի ներկայացմամբ, բացասական է, երբ զուտ ենթադրությունների հիման վրա հարցականի տակ են դրվում Իրանի նպատակները, մինչդեռ «Իրանի դիրքորոշումը տասը տարում չի փոխվել, այն հաստատ է, որ ոչ խաղաղ նպատակներով միջուկային ծրագիրը չպետք է օգտագործվի»: Հատկապես երբ, ըստ Սալեհիի, «միջուկային զենքը Իրանի նման երկրի համար կանխարգելիչ զենք չէ», ուստի ՄԱԳԱՏԷ-ի նյութերը «որեւէ իսկություն չունեն», այլ միայն նպատակ ունեն «ճնշումներ գործադրել Իրանի վրա»:

Սարերի գարունը մեկ գավաթի մեջ
ՍԱՐԻ ԹԵՅ
ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ
MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ
25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ
առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը
Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի դեմոկրատական կուսակցության մամլո ծառայությունը հայտնում է կուսակցության գրասենյակի նոր հասցեն եւ հեռախոսահամարը՝

Երեւան, Բուզանդի փ. 1/3, 2-րդ հարկ (Վերնիսաժի դիմաց),

Հեռ. 52-52-73, 091 12-50-51

Էլ. հասցե՝
arm–democracy@yahoo.com

## ՄԱԿ-ՅՈՒՆԵՍԿՕ

# Հայաստանը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության միջազգային բյուրոյի խորհրդի անդամ

Նոյեմբերի 4-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսի 36-րդ նստաշրջանի շրջանակներում կայացել են Գլխավոր կոնֆերանսի սահմանած կոմիտեների, հանձնաժողովների եւ այլ օժանդակ մարմինների ընտրությունները:

Երկրորդ ընտրական խմբում, որտեղ Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ երկրների հետ մեկտեղ ընդգրկված է նաեւ Հայաստանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության միջազգային բյուրոյի խորհրդի երեք թափուր տեղերի համար դիմել էին 4 երկրներ՝ Բուլղարիան, Սլովակիան, Հայաստանը եւ Լատվիան:

Ըստ ԱԳՆ հաղորդագրության, քվեարկությամբ ստանալով 108 ձայն՝ Հայաստանը դարձել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության միջազգային բյուրոյի խորհրդի անդամ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի այդ կառույցում Հայաստանը ներկայացնելու է Հայաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Կարինե Հարությունյանը:

**Ա. Հ.**

# Նորվեգիայի արտգործնախարարը՝ պաշտոնական այցով Երեւանում



Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով պաշտոնական եռօրյա այցով այսօր Հայաստան կժամանի Նորվեգիայի Թագավորության ԱԳ նախարար Յոնաս Գահր Ստյորեն: ԱԳՆ հաղորդագրության համաձայն, Նորվեգիայի արտգործնախարարին կընդունեն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն:

Երեւանում Յոնաս Գահր Ստյորեն հանդիպում կունենա արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ, դասախոսություն կկարդա ԵՊՀ-ում, ինչպես նաեւ կայցելի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

Նորվեգիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի՝ Հայաստան կատարելիք պաշտոնական այցի շրջանակներում Նորվեգիայի եւ Հայաստանի ԱԳ նախարարները կմասնակցեն «Էներգետիկ անվտանգությանն ուղղված փոքր հիդրոէներգետիկայի կայուն զարգացման նորվեգահայկական համագործակցության ծրագրի» մեկնարկի միջոցառմանը, Ֆրիտյոֆ Նանսենի հուշարձանի բացման արարողությանը, ինչպես նաեւ Ֆրիտյոֆ Նանսենի 150-ամյակին նվիրված համերգին:

**Ա. Հ.**

# Մինչեւ 2015 թ. Ազգային արխիվը կներկայացնի Ցեղասպանության մասին 700 փաստաթուղթ

Հայաստանի ազգային արխիվը կհրատարակի «Վշտապատում» եռահատոր ժողովածուն, որտեղ ընդգրկված կլինեն Հայոց ցեղասպանությանը վերաբերող 700 փաստաթուղթ: Եռահատորը թարգմանվելու է ռուսերեն, անգլերեն եւ ֆրանսերեն: Յուրաքանչյուր հատորը կկազմի 500 էջ: Ժողովածուի հիմնական փաստաթղթերը հիմնված են Արեւմտյան Հայաստանի 700 գյուղերի փրկված բնակչության հիշողությունների վրա: Այդ հիշողությունները հավաքագրել են Հովհաննես Թումանյանի ստեղծած հատուկ հանձնաժողովների անդամները: Գրքի անվան ընտրությունն էլ պատահական չէ: «Վշտապատում» այն ծրագրի անվանումն է, որի շրջանակներում 1916-ին հավաքագրվել են կոտորածներից փրկվածների հիշողությունները: Ազգային արխիվի տնօրեն **Ամատունի Վիրաբյանը** հույս ունի, որ մինչեւ 2015 թ. եռահատորը կհանձնվի ընթերցողների դատին եւ դրական ազդեցություն կունենա Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի վրա:

**Հ. Հ.**

# «Ալ Ջազիրան»՝ թուրքական «խորքային պետության» մասին

Ըստ թուրքական «Դունիա բուլթենի» կայքէջի, «Ալ Ջազիրան» պատրաստվում է 4-սերիանոց վավերագրական ֆիլմ նկարահանել թուրքական «խորքային պետության» մասին: Նկարահանումները պատվիրված են թուրք ռեժիսոր Քորայ Դեմիրին: Ֆիլմի առաջին մասը կընդգրկի 1875-1909 թթ., երկրորդը՝ 1909-1944 թթ., երրորդը՝ 1944-2002 թթ., իսկ չորրորդը՝ 2002-ից մինչեւ մեր օրերը, բացահայտելով «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության մութ ծալքերը:

Այսինքն թուրքական «խորքային պետության» հիմքերը գցվել են դեռեւս 1875-ին օսմանյան շրջանում, որը շարունակել է գոյատեւել Քեմալ Աթաթուրքի հիմնադրած ժամանակակից Թուրքիայում: Կիսապաշտոնական «Անադոլու» գործակալության հարցերին պատասխանելիս ռեժիսոր Դեմիրը հույս է հայտնել, որ «խորքային պետության» մասին վավերագրական այս ֆիլմը «Ալ Ջազիրայի» էկրանին կհայտնվի առաջիկա գարնանը եւ արաբական այս հեռուստատեսության հատուկ ալիքի միջոցով կհեռարձակվի նաեւ Թուրքիայում:

Այնուհետեւ Քորայ Դեմիրն ավելացրել է. «Թուրքական «խորքային պետությունը» նման է մի շղթայի, որի օղակները միշտ եղել են կապակցված: Մենք բոլորս ուզում ենք ապրել ժամանակակից բարգավաճ եւ արդար երկրում: Ուզում ենք առանց վախենալու ե՛ւ ապրել, ե՛ւ արտահայտվել: Թեեւ ներկայումս Թուրքիայում «խորքային պետությունը» հոգեվարքի մեջ է, սակայն դեռեւս շարունակում է գոյատեւել: Այդուհանդերձ հույս ունենք, որ վաղ թե ուշ «խորքային պետությունը» կլքի մեր երկիրը եւ այլեւս երբեք չի վերադառնա»:

**Հ. Չ.**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 8.11.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: